



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԵՂԻՐԴ ՄԵՍԻՐՈՊ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻԶԻՄ Ա. ՏԱՐԻ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՏՊԱՐԱՆ «ՄԵՍԻՐՈՊ»

ԲԱԼՈՎՅՈ ՍՈՖԻԱ.

1934

9(47.925)

9 - 47



24
Murphy
Burke's Palace

1944

10 ԱՅ 2006
19 AUG 2006

3(47.925)

Գ - 47

Խ.

ԳԼՈՒԽ ՄԵՍՐԱՊ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻԶԻՆ Ա. ՏԱՐԻ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Տպարան «ՄԵՍՐԱՊ»

ԲԱԿԱՆՎՈ ՍՊՅԱՀ.

2298
2299

02-111/7
1934

08 MAR 2013
6922

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Մ Ի Զ Ե Ն Ա .)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՆԵՐԱՀԱՅԵՐԸ

Ա. Դ. Ա. Ա.

ԵՐԿԻՐԸ ԵՒ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ . . . Մեր նոխնիքներու բնակած երկիրը կը գտնուի Փոքր Ասիայի մէջ՝ իր սահմաններն են . Հիւսիսէն՝ Մել Շողի լեռները, Կուր գետը, արևելքէն՝ Կասպից ծովի և Աստրազանի գալաքիրը, Տարաւէն՝ Միջագետը, Միւրիս, արեւմտաքէն՝ Անասովուի լեռները :


Հայաստան լեռնոտ երկիր մըն է և բարձրա տանդակ :

Հայաստանի աշխանացրաթիւնը պիտին կուրեւը է Հայոց պատմութեան համար : Աւստի մենք պէտք է տունենք առանձին զատ մը, և առնունութ զերպայի մէջէն, ոս է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՃ- ի ԱԲՐՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՀՅԵՆ ԲԵԼԿԵԵՐԸ . — Եսու կանուխէն, հազարաւոր ատրիներ տուած, Հայաստանի մէջ բնակիչներ կային : Անոնք զիր չունեին, որ իրենց պատմութիւնը զրէին : Մենք անոնց մա-




7141-56



Հին դամբարանի մը Նոր Պայտագիտի մէջ

— Չերեզմասին մէջ կան մէկ Եվրի մուղալ և 2 ինչոց
կմախթեան ըրզած դրույքամբ , նողէ ամօնեաւ , պատկան մարդ մը
եւկարէ րուր , եւկարէ միզակ , և ձիւկմատիք մը —


ԱԲՆ ՄԵՂԵԿԱՆԹԻՒՆԱԿՐ կը քաղենք իւնց զերեզման-
ներէն և թողուցաւ չէնքրէրէն , զործիքներէն :
Անսնք սովորութիւն ունէի իւնց մեռելները թա-



Երկարասեան զնեկամն


զել քարայրներու , զերեզմաններու մէջ : Գերեզ-
մանները շատ անհամ կ'ըլլաւին խոշոր հողէ կա-
րասներ և կուր քարէ սենթակներու . կը նմանէին :

Երբեմն երեւմաններուն վրայ կը անկէին
խոշոր բարձր քարեր , կուր շատ մը . քարեր ԿԵ-
ՇԱՐԵԲԻՆ կարդով : Այսպիսի զերեզմաններ բա-
ռական շատ զանուած են մեր եսկիսին մէջ :



Միկրաբասեան զերեզման

զնուուած . Հայաստանի մէջ



Տանիքին և բարեկամության համար առաջ է գալիք առաջ է գալիք

P. 4 U. U

ՎԱՆԵԱՆ ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

U. W. Φ 0 Φ 0 E W

Հին առևէն չի կոյին զիր, զպաց և արպագը թիւն։ Մարդ իէ պատմաթիւն չին կորող գրել։ Գուշանները, ապիչները և ծերուները բերնէ բերան կ առանդ էին Տին պատմութիւնները։ Առանց պատմութերը երկոչուն Աւանդական Պատմութիւնն, որ բոլորովին ճիշտ չի կրնար բլլալ։ Առանդ առան պատմութեան համեմատ, երբ Հայերը Հայուսանն եկան ե

բառի ցան, հոն դասն առզագի ժաղավարդ մը,
որ հապանդ եցաւ և խառնուեցաւ Հայերուն
Այդ ժողովուրդը զիտենք հիմայ որ կը կոչ-
ուէր Խալդինե կամ Աւարտուցինե: Անոնք
նշանաւոր էին, անէին թագաւորներ, որոնք
զիտէին արձանագրութիւններ դրեւ տալ: Ա-
նոնց զրած զիրերը բերոի կամ զամի նման
ըլլալուն համար կոչուած են թիեռածւ զի-
րեր: Անոնց լեզուն չենք զիտեր, բայց կը
համեմանք իմաստը:

ԱԽԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Հին ժամանակներ ոչ պիր կար , ոչ առաջըստթիւն : Մարդիկ չեն կրնար իրենց ժամանակ պատահած գեղաքերը զրի առնել : Իրենց նշանառը թափուրներուն , մեծ պատերազմներուն և քաջաթիւններուն վրայ չեն կրնար պատմութիւններ պետք :

Հիմա մենք դպրոցներ ունինք, հանապացիշները իրենց աշտկերաներուն կը պատճեն իրենց ազգին պատճեթինը և աշտկերաները միտք պահելով կը սորզին . Հին ժամանակ դպրոցներ և տառչիչներ ալ չկային : Մայզ տար կախարէն հին աշտկեր կային զաւանէներ, երբիչներ (աշուղ), որոնք զիւղէ զիւղ և քաղաքէ քաղաք պարսելով հին մարզերու պատճեթինը երդի ձեւով կը պատճենին :

Անսնք կ' երգեին հին քաջերաւ գործերը՝ հանդիսաւ ար տաներու միջոցին։ Աւանձին այլ և այլ քաղցրածայն նուզարաններ, ինչպէս Թառը են։

զառանաբերեն զատ առանին ծերուսիները, իսկ առաջ ստորափեք կը առնեին իրենց վսպրեկները և

տնոնց կը պատմէին սիրուն հեքեաթներ, կը պատմէին Հայկի, Արամի, Ասոյի, Տիգրանի և այլ պատմութիւնները : Տղաքներն ալ բերնէ բերան, լոելով կը սորվէին ու տարիներ ետքը իրենց զաւկներուն կը պատմէին :

Անոնց բոլոր պատմածները կը կռչուին Աւանդական Պատմութիւն, որովհետեւ որուց որդի իրարու աւանդուած պատմութիւններ են անոնք :

ԻՍՂՈԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Բնակոն է որ զիրի չառնուած և բերանացի աւանդուած պատմութիւնը բալորովին ճիշտ չըլլար . որովհետեւ բերնէ բերան, կամաց կամոց կը փախուի, պապիկը պատմած ժամանակ մէկ երկու աղուր բառեր կը գործածէ, աղան երբ կը մեծնայ պապին բառերը կը գործածէ, բայց ինքն ալ մէկ երկու աղուր բառեր և խօսքեր կ' աւելցնէ : Այսպէս հարիւր, երկու հարիւր տարի ետքը առաջին պապիկին պատմածէն բալորովին տարրի կերպով կ' սկսին պատմել : Ասոր համար է որ Աւանդական Պատմութիւնը ամէն կէր պով ճիշտ չի կրնար ըլլալ :

Ուրեմն աւանդական պատմութիւնը սորվէլէն ետքը, մենք պէտք է որովինք նաև մեր աղուն խեկան պատմութիւնը :

ՀԱՅԱՏԱԿԱՆ ՃԻՆ ԲԱԼԿԻՉՆԵՐԸ . — Գիտենք արդէն աւանդական պատմութիւնն որ մեր աղուն հիմնադիրը՝ Հայկ առաջին անդամ Հայաստանէն դուրս՝ հեռու կը գոնսւէր : Ան իր բոլոր ընտանիքը ժաղկից, իր սերունդի մարդիկը հաւաքեց և եկաւ Հայաստան ու հոն բնակեցաւ : Հայաստանի մէջ կային արդէն ուրիշ ցեղէ բնակիչներ, որոնք Հայկին հնագանդեցան, Հայերու լեզուն սորվեցան և եղան Հայ : Հայաստանի արդ հին բնակիչները ո՞վ էին, ի՞նչ լեզու կը խօսէին, ի՞նչ սովորութիւններ ունէին, չափ բան չենք զիտեր : Աւանդական պատ-

մութիւնը բան մը չըսեր անոնց մասին : Բայց մենք հիմակ զիտենք այդ բոլորէն :

ԽԱԼԴԻՒՆԵՐ կամ ՈՒՐԱՐԺՈՒՅԻՒՆԵՐ . — Հայ առաջնորդներու կամ նահապետներու միջոցաւ Հայերը Հայաստան զալ առաջ, Հայոց երկիրը բնուկողները կը կոչուէին Խալդիւն կամ Ուրարժուցիներ :

Ուրարժուցիները չափ նշանաւոր ժողովաւրդ էին և ունէին քաղաքներ, բերգեր, թաղաւորներ : Անոնց թաղաւորները զիտեին քարի վրայ զիրեր զրել առաջ : Վանի մէջ և Հայաստանի ամէն կողմերը արյ տեսակ արձանագրութիւններ չափ կան : Ասոջ մարդ չէր կրնար կարգալ զանոնք, բայց հիմայ կը կարդացաւին և կը հասկցուին : Այդ զիրերը զբուած են քարերու վրայ փորուելով, փոքրիկ զամբ, բեւերի նման նշաններով, այդ պատճառով կոչուած են բեւերածեւ զիրեր :

Տեսէք միւս էջին վրայ գրուած բենուզրերը, որոնց մէջ վերէն վար մազու պէս կանգնած զամբ կը ցուցնէ՝ մարդ, երկու սզբանիկ զամեր ծաւո՛ իրաբու վրայ դարձած, կը նշանակին աշխարհ, ինչպէս երկինքն ու երկիրը, որ իրաբու վրայ դարձած վրաններու կը նմանին, ջուրի նման, գետի նման իրաբու ետեւէ հսող զամերու նշանները կը նշանակեն ջուր, զետ ևն :

ՈՒՐԱՐԺԵԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒՅԻՒՆԵՐԸ . — Հայաստանի մէջ զոնուած արձանագրութիւնները, ամէնքն ալ բեւեռածեւ են, որոնք կը հասկցուին բայց լեզուն զիտցուած չէ : Անոնց իմաստը կարելի է հասկնալ, բայց չէ կարելի զիտնալ թէ ի՞նչ լեզուով զրուած են : Օրինակ՝ ինչպէս 10 թուանշանը բոլոր ազգերն ալ կը զրեն, կը հասկնան, բայց տարբեր կը հնացն : Անանկ ալ զիտունները բեւեռազիբներուն իմաստը կը հասկնան, բայց ինչ լեզուով զըր-

Առաջ բարձր չեն կրնար իմանուլ, որով հայ հիմուն
կորուած է Աւագաստինուան թղթաւուն:

Մարդ

Աշխարհ, երկիր

Նշան յոզնակիի

Թագաւոր

Վայտ, ծառ

Թոշուն

յոգնակիի նշան

Կին

Քաշաք

Եղ

Ջե

Ջեծազօր

առն, տաճար

ազգ, ժողովուրդ

Արձանագրութիւն

զուս

Դուռ (քաշաքի)

աշ

մարդիկ, ժողով
վուրդ

միս

ԱԽՐԱՐՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՇԱՆՆԵՐ

Ա աէր

բոլոր, ամենայն

երկիր

Ardini Աստուած.Օր

Աստուած

Ըսւր

ոչխար.

երշանիկ

տեղ, վայր

գոմեց, ցուլ.

Toisba, Աս-
տուած

գետ

պաշտառ, տա-
ճար

արձանա-
քրուած քար

թագաւոր

սեղան

կին

գաղաքան

Դ, Գ. Ա. Ա

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԹԱԳԱՀՈՐՄԵՐԸ, ԱՐԱՄԵ

Ա. Մ Փ Ա Փ Ա Խ Մ

Հայոստանի հին անունն էր ԱԽՐԱՐՏՈՒԻ,
իու հարաւային մասը կը կոչուէր նեխիի : Այն
երկրին մէջ ամէն զիւզ և քազաք իրենց թա-
գաւորն անէին: Այդ վարդիկ թագաւորները
իրարու հետ անժիարան էին և կը կոչուէին,
այդ պատճառով ալ տէար էին:


Արամէ նշանաւոր իշխան մը եղաւ, որ
ուզեց միացնել բալոր թագաւորները: Բաւտ-
կան յաջողեցու, կուեցաւ Ասորեստանի Ասդ-
մանաստր թագաւորին զէմ և յաղթեց: Ասդ-
մանաստր Վանայ ծովի տառածին զան ընել
առաւ: Արամէ իր նպատակին մէջ յաջողեցու
վրայ ը, երբ մեռաւ:

ԱԽՐԱՐԻ ԵԽ ԱԽՐԱՐՏՈՒԻ . — Հայոստանի հա-
րաւային գուտառները հին անեն կը կաչուէին նախիի,
որ կը տարածուէր Վանայ ծովին մինչեւ Ուրմիայ
լիճը և Միջազգեաքի գաշամերը: Վանայ ծովը կոչ-
ուած է նաև նախիի Վերին Ծով:

Ուրարտու տէրի ընդարձակ երկիր մըն էր:
Ան կը տարածուէր Երասխ գետի հովիաներէն մին-
չև Վանայ ծով: Յետայ նախիրի երկիրներն ալ միա-
նալով, Արարտուն ընդարձակ երկիր մը դարձաւ:

Ուրարտուի մէջ կային բազմաթիւ թագաւոր-
ներ և իշխաններ: Ամէն քազաք իր թագաւորն ու-

Ամէն իշխան կամ թաղումը կը կառավարէս
իր գիւղը կամ քառաքը :



Այս թաղաւորները և իշխանները երեքմն երբեմն երբեմն իրարու հետ կոփեներ կ' ընէին : Մէկ քաղաքին թաղաւորը միւս քաղաքի թաղաւորին վրայ


կը յարձակէք և ոնքը յաղթելով կը զբանեք անոր քաղաքը : Այս պէս իրենց մէջ միշտ կոխ կար ու բաժնուած էին : Այնպէս որ երբ դուրսէն գօրաւոր թշնամի մը գար , առէնքն ալ կը յաղթաւէին :

Բայց Աւրարտակի թագուարներուն մէջ նշանաւ-
սար մէկը ելու . անոր անունն էր Արմիկ :

Արամէ անուր ըերդաքա աք մ ունէր , նուզ գունիա անունով , որ Վանայ ծավան ժամերը կը գտնուէր : Արամէ մասնաւոր մարդկը որկեց Ուրարտակի և Նախիրիի թագաւորներուն և ըստ :


— ԵԿԵՔ ՄԻԱՅԱՆԲԻՆՔ : ԵՐԵԲ ԻՐԱՐՈՒ ՄԵԶ ՊՈԽ-
ԱՌԱՋ ԸԼԼԱՅՆՔ, ԱԿԱՐ Կ' ԸԼԼԱՅՆՔ և Առարեսաւնի թա-
զաւարները մեր երկիրները արշաւելավ՝ մեզի կը
յաղթեն : ԵԹԷ ՄԻԱՆԱՆԲԻՔ Պօրտուր կ' ԸԼԼԱՅՆՔ և կը բ-
նանք ԿԻՄԱՊՐԵԼ մեր ամէնքի թնամի իին :

Սրամէի խելացի խօսքերը լոկով , թագուորներէն և իշխաններէն շատերը խօսք տռին և միաբանեցան : Միւս իշխաններն ալ մ իտքանելու վըրբաժնին :




Թոքրազ գալիի աւերակներու պեղումները
Աւարտուի մայրաբաղաք՝ Վանի մօս

Աստրեանի թարապն էր այն ժամանակ
Սաղմանասար, որ երբ լսեց թէ Արամէ իրարու կը
միացնէ բարսր մանր թարգառուները և կը պատրաս-
տուի իր վրայ յարձակելու, ժողվեց իր զինոսրները
և արշաւեց դէպի Նախրի և Ռուբարու:



Նույսունիացիները կը դիմագրեն Սաղմանասրի


Ճազմանի խոցին սկսելը՝ յաղթեցին և Սարգսանառ
սախալու եցու և առ քաշուիլ : Ան կը կարծէր թէ Վանի
ծովառն ասատւածը իրեն ղեկ բարկացած է : Հին ա-
տեն Աւրաբառուցիներու պէս Սարգսանցիներն աւ
կը հաւասարին թէ բոլոր զետերը և ծովերը իրենց
ասատւածներն ունին , ամէն քազաք , ամէն տեղ և
ամէն դաշտու լիս իրենց ասատւածներն ունին :



Աւասի սէտք է պատմել զանգնք : Եթէ մէկը այդ-
տառուածներէն մէկուն պատիւ և զո՞ն մատուցած չըլ-
լար , կը բարկանար այդ ասաւածը և թշնամի կ'ըլլար :

Այս պատճառով Սաղմանասար կարծեց թէ Նահերի երկրին աստուածը իրեն գէմ բարկացած է, ասոր համար ինքը յաղթուեցաւ : Եւ որովհետեւ Վաշնոյ ձովը Նախրիի ծով կը կոչուէր, զնոց անոր մօսդոհեր մորթել առաջ մէջ բնակող աստուածին և իրեն արձանն ալ կանգնեցնել առաջ :

Սաղմանասար թալրուրը զնայ Նինուէ, նոր զօրք մողիկ և նորէն յարձակեցաւ Ուրարտուցիներուն վրայ : Արամէ նորէն անոր գէմ ելու և թոյլ չառաւու որ Սաղմանասար իր երկիրը մտնէ և բոլորովին զրաւէ : Արամէ աշխատեցաւ դարձեալ փոքրիկ թաղաւորները միացնել : Այս անդամ արդէն յաջողելու վրայ էր, երբ հիւանդացաւ և մեռաւ :



Առեխտանցի է կը յահակի՞ն
Աւարտական բերդի մը վրոյ

Դ. Դ. Ռ

ՍԱՐԴՈՒՐԻՍ ԵՒ ՄԵՆՈՒԱՍ

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Արամէն ետքը նշանաւոր եղաւ անոր թոռուր Սարգուրիս, որ իր մեծ հօրը նման աշխատեցաւ միացնել մանր իշխանները : Սաղմանասար իր զօրապետը յաղթուեցաւ : Սաղմանասար ինք գէմ ելաւ, բայց վախցաւ Սարգուրիսի հետ կոռւելէ : Սարգուրիս Վանը գրաւեց և մայրաքաղաք ըրաւ : Առաջին անգամ բեւեռաձեւ արձանագրութիւն կանգնեցնող ուրարտուցի թագաւորն ինք եղաւ : Իրմէ ետքը նշանաւոր եղան ԽՊՊՈՒԲՆԽՍ, մանաւադ ՄԵՆՈՒԱՍ :

Անոնք ընդարձակեցին իրենց երկիրը և արձանագրութիւններ կանգնեցին : Մենուաս շինեց Մանազ կերտ քաղաքը :

ՍՍ. ՏՊ. ԽՊ. ԵԿ. Ի. ԳՈՐԾԵՐԸ. — Արամէի մեռնելէն ետքը նշանաւոր թաղաւոր մը եղաւ անոր թոռը Սարգուրիս :

Սարգուրիս չատ խելացի ու քաջ թաղաւոր մը եղաւ : Ան իր մեծ հօրը նմանաւութիւնն անմատութիւնն ու լուր մանր իշխանութիւնները քայլու միացնելու դաշ-

Ազգ. Պատմ. Միջին Ա. Հ. Ա. Խոչվածքանիշ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

նակից դարձնել և միացած ուժով կռուիլ Ասորեստանցիներուն դէմ : Ան յաջողեցաւ բաւական . շըրջակայ բոլոր իշխանները հետեւեցան Սարդուրիսի խորհուրդին և ապատամբեցան Ասորեստանի թագաւորին դէմ :


Սաղմանասար թագաւորը այս բոլորը տեսնելով շատ մեծ հսզի մէջ ինկաւ : Անմիջապէս զօրք ժողվեց և իր քաջ զօրակետներէն մէկին տուլով զրկեց Ուրարտու : Զրաւետը եկաւ , պատերազմեցաւ , բայց չարչար յաղթուեցաւ Սարդուրիսի և անոր հետ միացած իշխաններու : ինւորներէն :

Այն ժամանակ Սաղմանասար ստիպուեցաւ նորէն զօրք ժողվել և ինքը անձամբ յարձակիլ դաշնակի ներուն վրայ : Բայց Սա մանասար վախցաւ ուղղակի Սարդուրիսի վրայ յարձակելէ . Ուրարտու չզնաց , Սարդուրի ի դանակից ուրիշ վոքրիկ թագաւորներու դէմ ելաւ , անոնց երկիրն արշաւեց : Անկէ ետքը , մեծ լան մը չկրնալով ընել , դարձաւ Ասորեստան :



Նախրիի կողմէ Ասորեստանի ստացած հարկերը

Մարդուրիս միւս կողմէն սկսաւ իր երկիրը ընդարձակել : Վան քաղաքը , որ փոքրիկ թագաւորի մը կը պատկանէր , զրաւեց և իրեն մայրաքաղաք ը-



Ասորեստանցիները կ' աւերէն ուրարտական տաճար մը նախեան Մուսախրայի մէջ

բառ : Սարդուրիս կոչուեցաւ « Թաղաւարներուն . թաղաւար » , որովհետեւ իրեն հպատակեցան շատ մանր թագաւորներ :

Ուրարտուի թաղաւարներուն մէջ առաջին անդամ Սարդուրիսն էր որ իր երկիրներուն մէջ քարէ արձաններ կանդնել տուաւ և անոնց վրայ բեւեռածեւ զիրերով իրեն անունը և զործերը զրեց : Եթէ Սարդուրիսի այդ արձանազրութիւնները չըլլային, մենք բան մը պիտի չկրնայինք զիանալ ոչ իրեն և ոչ Արամէի վրայ :


Սարդուրիս նորոգեց և գեղեցկացուց նաև Վան քաղաքը, շինեց նշանաւոր չէնքեր , տաճարներ ևն. որով չինարար թագաւոր մը եղաւ :

Սարդուրիսի նման քաջ , խելացի թաղաւորներ եղան անոր որդին և թոռը : Որդին կը կոչուէր Խաղուինիս , իսկ թոռը , Խաղուինիսի որդին , կը կոչուէր Մենուաս : Մանաւանդ այս վերջինը՝ Մենուաս շատ նշանաւոր եղաւ :

Անոնք երկուքն ալ հետզհետէ իրենց երկիրը ընդարձակեցին : Յարձակեցան Ուրարտուի արմամըտեան , հարաւային և արևելեան կողմերը , զրաւեցին քաղաքներ և զիւղեր : Ասսրեսաանի թաղաւարներն անդամ վախցան և չամարձակեցան դէմ ելնել : Այսպէս որ Մենուաս մտաւ Ասսրեսաանցիննրու երկիրը և մտաւ մը զրաւեց : Իր անցած տեղը , որ լեռներու մէջէն նեղ անցք մը՝ կիրճ մըն էր և կը կոչուի այժմ Քելիշինի կիրճ , արձան կանդնեց և անոր վրայ իր քաջութիւնները զրել տուաւ : Մինչև հիմայ այդ արձանազրութիւնը կանգուն կը մնայ :

Մենուաս իր զրաւած երկիրներէն բազմաթիւ ժողովուրդ գերի տարաւ զէսի Ուրարտու և հոն ըրնակեցուց : Գրաւեց ճախ գանձեր , որով հարաւացուց և ճոխացուց Վանը : Շինեց ջրմուզներ , որոնց մի-

ջացաւ հեռու տեղերէ առաս ջուր ըերաւ վահն :



Մենուասի արձանագրութիւնը Քելիշինի մէջ

Անոր բոլոր զործերը նշանաւոր եղան , մինչև հիմակ հիանալի են անոր շինած չէնքերը , որ կը դանուին Վան , փորուած ժայռերուն վրայ :

Շինեց նաև քաղաք մը և կոչեց զայն Մենուասակերտ : Հիմակ կը կոչուի Մանազկերտ , որ շինուած է եփրատ գետին քովերը : Այս քաղաքը մայրաքաղաքն էր Հայոց Մանազկեան նախարարութեան :

Ե. Գ. Ա.

ԱՐԳԻՇՏԻՄ, ՀԱՅԱՐԴՈՒԹԻՒՄ Բ., ՌՈՒՍԱՍ

Ա. Մ Փ Ա Փ Ո Խ Մ

Մենուասի յաջորդեց իր որդին Արգիշտիւ:
Ան քաջ և զօրաւոր թագաւոր մը եղաւ : Ա-
նոր մէկ արձանագրութիւնը գտնուած է որ կը
կոչուի Տարեգրութիւն Արգիշտիի : Նոյն արձա-
նագրութեան մէջ ան կը պատմէ թէ 14 տարի
լազմաթիւ պատերազմներ բրած է և հիսու
շատ գերիներ ու աւար բերած է վան : Ինքո
եղած է շինարար թագաւոր մը, շինած է կա-
մուրջներ, ջրմուղներ և պալատներ :

Արգիշտիսի յաջորդեց Ասրդուրիս Բ., որ
պատերազմեցաւ Ասորեստանի Թագղաթփազա-
սար թագաւորին դէմ և յաղթուեցաւ :

Սարդուրիսի որդին էր Ռուսաս Ա., որ ու-
զեց ի : Հօր պարտութեան վրէմը լուծել . իր
դաշնակիցն էր Ուրգանա : Երկու թագաւոր-
ներուն դէմ ելաւ Ասորեստանի Սարգոն Միապե-
տը, որ չհամարձակեցաւ Ռուսասի դէմ քալել
և յարձակեցաւ Ուրդանայի վրայ . գերի տա-
րաւ անոնց Խալդի աստուածը : Ռուսաս վիշ-
տէն անձնասպան եղաւ :

Արգիշտիս եկ իր գործերլ . — Մենուասի
յաջորդեց իր որդին Արգիշտիս, որ երբ զահը բար-
ձրացաւ, իր հօրը գրաւած երկիրները դրեթէ բռ-
լորն ալ ապստամբեցան :

Արգիշտիս ստիպուեցաւ մի առ մի խոնարհեցը-
նել զանոնք : Ընդարձակ արձանագրութիւն մը թօ-
ղած է, որ կը կոչուի Տարեգրութիւնն Արգիշտիսի :
Այդ արձանագրութիւնը կը կոչուի նաև Միերի դուռ :

Իր ապստամբները խոնարհեցնելէն ետք, կ'ար-
շաւէ նաեւ իր թշնամիներուն երկիրները և շատ
տեղեր կը գրաւէ : Ինք կը պատմէ թէ Ուրենու ա-
նուն քաղաքէն գերի տարած է 19000 մանուկ, 10000
մարդ, 23,000 կին, 1,600 ձի, 35,000 եղ, 10 հա-
զար ոչխար ևայլն : Իր երկիրը կը ճոխացնէ, կը
կանչնէ մեւեաններ, արձանագրութիւններ, կը շինէ
կամուրջներ, ջրմուղներ և այլն :

ՍԱՐԴՈՒՐԻՍ Բ., ՌՈՒՍԱՍ Ա. Եկ գործերլ .

— Արգիշտիս հին Հայաստանի տմէնէն նշանաւոր
թագաւորը կ'ըլլայ :

Արգիշտիսն ետք նշանաւոր թագաւորներ ե-
ղան Սարդուրիս Բ., Ռուսաս Ա., Ռուսաս Բ, ևն . :

Սարդուրիս Ա. իր մեծ հայրերուն նման միա-
ցաւ փոքր թագաւորներուն հետ և ուղեց կոռուիլ մեծ
թշնամիին՝ Ասորեստանի դէմ : Ուրարտուցիները
լեռնարնակ մարդիկ էին . անոնք լաւ զիտէին լեռ-
ներուն վրայ կոռուիլ : Խոկ Ասորեստանցիները դաշ-
տի մէջ կը բնակէին և լաւ զիտէին դաշտի վրայ կըո-
ռուիլ : Լեռներուն վրայ չէին կրնար պատերազմիլ :
Ուրարտուցիներն ալ դաշտերուն վրայ փոքրաւու-
չէին : Այս պատճառով Սարդուրիս Բ. երբ Ուրար-
տուէն դուրս բաց դաշտի վրայ կոռւեցաւ Ասորես-
տանցիներուն հետ, յաղթուեցաւ : Ասորեստանի
թագաւորն էր Թագղայ փաղասար :

Ռուսաս Ա., երբ զահն ելաւ ուղեց իր հօրը վր-

րէմը լուծել։ Զօրքեր ժողվեց, դաշնակից եղաւ ուրիշ թաղուարներուն հետ։ Անոր բարեկամ թաղաւարներէն էկն էր Ուրգանա, որուն մէկ խոչոր կը-սիրը զո՞նուած է։



Ուրգանայի կնիքը

Ասորեստանի թաղաւարը՝ Սարգոն, յարձակեցաւ Ռուսասի դաշնակիցներուն վրայ։ Ան չհամարձակեցաւ ուղղակի կոուիլ Ռուսասի հետ։ Արշաւեց Ուրգանայի երկիրը։



Նախրիցի զերիները Ասորեստան տարուած

Ուրպէսպի Ուրգանայի զինուորները յաղթեն, Ռուսաս իր Խալդի աստուածը զրկեց զինուորներուն քով, որ էս։ Ճատուցանեն և ան պաշտպանէ զիրենք։ Բայց պատերազմի միջոցին Սարգոն զերի րոնեց Խալդի աստուածը։



Ասորեստանի յազգաւորը՝ Սարգոն

Ռուսաս երբ լսեց որ Խալդի զերի ինկած է առանապան եղաւ։ Հիները կը հաւատային թէ երբ մէկաւն աստուածը զերի իյնար ինքն ալ զերի ինկած կ' ըլլար։

Զ. Դ Ա Ս

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏԿԱՐԱՑՈՒՄԸ

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ոռւսաս Ա. էն ետքը Ուրարտու հետզհետէ
սկսաւ տկարանալ : Իրմէ յետոյ եկող թագա-
ւորներուն մէջ կը յիշուին Արգիշտի Բ., Ոռւ-
սաս Բ., Երիմենաս, ևայլն . անոնք մեծ զոր-
ծեր կատարած չեն :

Ոռւսաս Բ. ի ժամանակ Ասորեստանի Սի-
նելերի թագաւորին երկու որդիները, Ադրա-
մելք և Սաւասար, սպաննեցին իրենց հայրը
և ուզեցին թագաւորել, բայց իրենց եղբայրը
հալածեց զիրենք . անոնք ալ փախան Ուրա-
րտու . Ասորեստանի թագաւորը չհամարձակեցաւ
մտնել Ուրարտու, Հայաստան :

Ոռւսաս Բ. էն ետք Ուրարտու շատ տկա-
րացաւ, որովհետեւ բազմաթիւ բարբարոսներ
արշաւեցին իրենց երկիրը . անկէ յետոյ Հա-
յաստան մտան բուն Հայերը և հնագանդեցու-
ցին Ուրարտուի բնակիչները :

Արգիշտի Բ. եի ԱԱՐԳՈՆ . — Ոռւսաս Բ. էն
ետք Ուրարտուի զահը բարձրացաւ Արգիշտի Բ.,
որ խօհեմութիւն համարեց Սարգսնի դէմ նոր պա-
տերազմներ չընել, որովհետեւ իր հայրենիքը շատ

տկարացած էր : Սարգսն չմտաւ Ուրարտու, բայց
անոր դաշնակից և դրացի մանր թագաւորներուն
վրայ յարձակեցաւ :

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԸ եի ՈՒՐԱՐՏՈՒ : — Այս ա-
տեհները Ուրարտուի սահմաններուն վրայ երեւան
եկած էին բարձրաց ժողովուրդներ, որոնք սկսած
էին իրենց ճամբաններուն վրայ ամէն ինչ աւերել
ու քանդել : Այդ բարբարոսները կը կոչուէին Կիւ-
մաներ, Սկիւրացիներ, ևայլն : Անոնք շատ անզութ
մարդեր էին . իրենց թշնամիներուն գանկերը իրը



Քարքարոսները իրենց զենքերը կը պատրաստեն

զաւաթ կը գործաէին : Այդ բարբարոսները նախա-
պէս կը բնակէին Սև ծովի հիւսիսային կողմերը .
ապա արշաւեցին զէպի հարսւ և տարածուեցան
Փոքր Ասիտ և Հայաստան :

Բնականբար Ուրարտուի թաղաւոնները շատ
նեղուեցան այդ բարբարոսներէն : Արգէն երկարա-
տեւ պատերազմներով չափազանց յոդնած ու տկա-
րացած էին :

ՈՈՒՍՍՍ Բ. եի ԱԴՐԱՄԵԼՔ, ՍԱՐԱՍԱՐ . —
Բարբարոսներու այս արշաւանքներու ատեն Ու-
րարտուի թագաւոր էր Ոռւսաս Բ. : Արգիշտի Բ. ի

սրդին , որ քաջ էր և
խելացի : Ան իր հօրը
պէս խոհեմ վարուե-
ցաւ : Իր օրով Ասո-
րեստանի մէջ խոչար
դէպք մը պատահե-
ցաւ : Սինեմերիք թա-
զաւորին երկու որ-
դիները՝ Ադրամելիք և
Սարասր տաճարին
մէջ սպանեցին իրենց
հայրը և ուզեցին ա-
նոր տեղ թաղաւորել :
Սակայն Սենեքերիրի
մէկ ուրիշ որդին ,
որուն անունն էր Ա-
սորդան , զօրք ժող-
վեց և յարձակեցաւ
իր հայրասպան եղ-
բայրներուն վրայ ,
յաղթեց անոնց : Ա-
նոնք ալ փախան Ու-
րաբառ , Ռուսասի
ծառ : Ասորդան չհա-
մարձակեցաւ մտնել
Հայաստան , իր եղ-
բայրները հալածելու
համար : Ադրամելիք
և Սարասր հաստատ-
ուեցան Հայաստանի
հարաւային լեռնե-
րուն վրայ :

Աւասաս Բ . իր հօրը պէս աշխատեցաւ իր եր-
կիրը խաղաղ պահել . ինքինքը տուաւ շինարա-
րութեան . կանգնեց արձանադրութիւններ , շինեց
պալատներ , առաջարներ և բերդեր :

L. G. W.

ՈՒՐԱՐՏԱՑԻՈՑ ԿՐՈՆԸ ԵՒ ԲԱՐՔԵՐԸ

Ա Մ Փ Ա Փ Ա Կ Մ

Աւրաբտուցիները կը հաւասային թէ ա-
մէն գիւղ, քաղաք, ծով, գետ, գաշտ իր աս-
տուածն ունի: Անոնք կը շինէին խոշոր մեհ-
եաններ, սիւնազարդ: Մեհեանին մէջ կը գոր-
ծածէին բուրվաներ, աւազաններ եւայլն:
Կային մեծ և փոքր աստուածներ: Մեծ աստ-
ուածներն էին Խալդի, Արդինի, Տեխարա:

Կը պաշտէին նաև Շամիրամ գիցուհին ,
ինչպէս նաև Մարդուկ աստուածը իր չորս
հետեւորդ փոքր աստուածներուն հետ : Այդ
չորս աստուածները կէս շուն կէս մարդ էին ,
կը կոչուէին Առլէզ , որոնք մեռելները կը
կենդանացնէին : Կը զոհէին ոչխար , ձի , եղ ,
ուզտ ևայլն : Ուրարտուցիները բարեպաշտ ,

քո՞ւ, աղասասէր մարդեր էին :

ՈՒՐԱՐՏՈՒԹԻՆԵՐՈՒ ԿՐՈՆԸ, ՏԱՅԱՐՆԵՐԸ, —
Ուրարտուցիները հեթանոս էին և կը պաշտէին շաղ-
մաթիւ աստուածներ : Անոնք կը հաւատային թէ ա-
մէն քաղաք և ամէն զիւլ իր աստուածն ունի, ա-
մէն լեռ, ամէն աղբիւր, գետ, գաչտ իրենց աս-
տուածն ունին : Եւ անոնք այդ բոլոր աստուածնե-
րը կը պաշտէին :

Կը շնէին խոչսր մեկեաններ : Մե եռնին առ-
ջև խոչսր սիւներով զաւեթներ կային : սիւներուն
և պատերուն վրայ դրուած էին կլար, դարդարուն
վահաններ, փորուած էին թեւեռուած զիրեր, աստ-
ուածներու արձաններ եւալին :

ՈՒՐԱՐՏՈՒԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ. — Ուրարտու-
ցիները թէն չառ աստուածներ ունէին, բայց այդ
աստուածնեցւն ամէնքն ուլ հաւատար չէին : Կա-
յին մեծ ու փոքր աստուածներ :

Մեծ աստուածները երեք հաս էին : առաջին



Նամիւամ գիցունին

էր հԱԼԴԻ, որ լուսինի աստուածն էր . երկրարդը՝
ԱՐԴԻՆԻ, որ էր արեկի աստուածը . իսկ երրորդն
էր ՏԵԽՈԲԱՍ, օդի աստուածը :

Անոնք կը պաշտէին նաև աստուածունի մը ո-
րուն անունն էր ՇԱՄԻՐԱՄ : Այս գիցունիէն զատ
կը պաշտէին ուրիշ կարեոր աստուած մը, որուն
անունն էր Մարդուկ : Այդ աստուածը իրեն հետ ու-
նէր նաև չորս փոքր աստուածներ, որոնք կէս մէջ-
քէն վար չուն էին, կէսէն վեր՝ մարդ : Ուրարտու-
ցիները կը հաւատային թէ այդ չորս աստուածները
կ'իջնեն պատերազմի դաշտին վրայ և ով որ քաջ է
անոր վերքերը կը լիգեն ու կը կենդանացնեն : Այդ
չորս աստուածները կը կոչուէին Առլեզներ :

Իրենց աստուածներուն զո՞ւ կը մատուցանէին
ոչխար, ձի, եղ, ուղտ ևայլն : Ուղտը շատ հեռու
տեղերէ կը բերէին : Տեսակ մը ուղտ կար, որ եր-
կու կուզ կամ սապատ ունէր կոնակին վրայ . այդ
տեսակ ուղտեր ալ կը զոհէին :

ՈՒՐԱՐՏՈՒԻԻ ԲԱՐՔԵՐԸ. — Ուրարտուցիները
չառ բարեպաշտ, քաջ մարդիկ էին : Լեռնցիի պէս
չարքաշ էին: Կուզէին միշտ աղատ ըլլալ և ուրիշն
չնպատակիլ : Ասոր ամար միշտ կը կոռուէին թշնա-
միներուն դէմ :

Ուրարտուցի մեր նախնիքները կը զարծածէին
պրոնզէ, պղինձէ, փղուկրէ և արծաթէ ամաններ,
զարդեր, զէնքեր, թանկազին քարերով մատանիներ
ու զարդեղններ: Կը մշակէին ու կը զարծածէին
ցորեն, գարի, զինի, մեղր, կաթնեղէն, կարագ, իւղ
ևն . Անոնք կը հազնէին վուշէ և բուրդէ զունաւոր
կերպասներ, կը կրէին վերարկուներ, մինչև ծուն-
կերը հասնող պարեզօտներ :



Բ. Գ. Ա.

ՀԱՅԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԸ

Ա. Մ Փ Օ Փ Ո Ւ Մ

Հայերէն խօսող մեր նախնիքները ցեղակից էին եւրոպայի գրեթէ բոլոր ժողովուրդներոն, որոնք առաջ մէկտեղ կը բնակէին և կոչուած են Հնդկեւրոպական կամ Արխական ժողովուրդներ։ Անոնք յետոյ իրարմէ բաժնը ուեցան և գացին իրէնց այժմեան հայերէնիքները։ Հայերն ալ բաժնուեցան և Ո՛ւ ծովի հիւսիսային կողմերէն անցան Պալքանեան թերակղղին և ապա Տարտանէլի նեղուցէն անցնելով մտան Փոքր Ասիա։


Փոքր Ասիայի մէջ երկար տաճն դրացի եղան Քետացիներուն կամ Հերիթներուն, որոնք շատ նշանաւոր ժողովուրդ մըն էին. անոնց դինուարական իշխանութիւնը մինչեւ Եպիպառու տարածուեցաւ. անոնք ալ իտուցած են շատ արձանագրութիւններ։ Քետացիները Հայերուն հետ քոյլ ժողովուրդ մըն էին։

Հայերը, Քրիստոսէ 700 տարի առաջ, արդէն եկած հաստատուած էին Հայաստանի տրեմտեան կողմերը, Եփրատ զետի հօգիտներուն մէջ. անոնք կամաց էամաց Հայաստան մտան և տարածուեան. բնիկ Ծւրարաւցիները

հպատակեցուցին, իրենց լեզուն սորվեցուցին անոնց և բուլորովին խառնուելով մէկ աղդ մը

դարձան. հետեւաբար մեր հարագատանախնիքները կը լան բուն Հայերը և ուրարտուցի ժողովուրդը։

Քետացի զիմուրներ



ՀԵԴԵԽՐՈՊՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ. — Հայերէն լեզուն խօսող մեր նախնիքները դուրսէն եկան, մտան և հաստատուեցան Հայաստան։ Անոնք ցեղակից էին Թրանքներու, Գերմաններու, Անգլիացիներու, Ռուսներու, Յոյներու, Պարսիկներու, Հընդիկներու, ևայլն։ Այդ ժողովուրդները շատ առաջ, հին ժամանակներ, մէկ աեղ կը բնակէին։ Անոնք կոչուած են Հնդկեւրոպական կամ Արխական ժողովուրդներ։ Այս հին ժողովուրդներն ընդհանուրագէն

բարձրահասակ երկնազոյն աչքերով, սպիտակամորթ մարդիկ էին: Հայերը այս քոյր ժողովուրդներէն բաժնուեցան Քրիստոսէ 3—4000 տարի առաջ, անցան Սեւ ծովի հիւսիսային կողմերէն և մտան Պալքանեան թերակղզին: Հոյ բաւական երկար առեն բնակեցան ու Տարտանելի կամ Վաստորի նեղուցէն անցնելով մտան Փոքր Ասիա: Իրենց հետ կային քոյր ժողովուրդներ, ինչու Փոխեզագիներ:

ՀՅԱՅՑԻՆԵՐԸ ԵՒ ՀՅՈՒՅԹԸ. — Փոքր Ասիայի տաէնէն նշանաւոր ժողովուրդն էին Քետացիները: Անոնք հիմնած էին մեծ իշխանութիւն մը, պատերազմոծ էին Եգիպտասին Ասորեստանի թագաւորներուն հետ և շատ անզամ յաղթած էին անոնց: Շատ մը զիառններ կ'ըսեն թէ այս հետացի կամ ներիր ժողովուրդը մեր նախնիքներուն՝ Հայերուն հետ քոյր ժողովուրդը մըն էր. երկար առեն Հայերը և Քետացիները քով քովի աղբած էն:

Քետացիները՝ Ուրարտացիներու պէս, թողուցած են բազմաթիւ արձանազրութիւններ, մեհետններ, պատառներ, կամուրջներ եւայլն:

ՀՅՅԵՐԸ ՀՅՅԱՍՏԱՆ ԿԸ ՄԾԵԵՆ. — Մեր հայուսուն նախնիքները՝ Քրիստոսէ 8000 տարի առաջ, եկան բնակեցան Ալիս և Եփրատ գետերուն հովիսաներուն մէջ: Կամաց կամաց թափանցեցին Ուրարտուն, որուն անունը Հայաստան զրին: Տեղացիները հնագունդեցան նորեկներուն, անսոնց լեզուն սորվեցան, և բարսովին իրարու մէջ խառնուեցան, մէկ ժողովուրդ մը դարձան:

Ուրարտացի, աեղացի մարդիկը միջահասակ, սեւ մագերով, զօրաւոր կազմուածքով ժողովուրդ մըն էին: Մինչեւ հիմակ Հայերուն մէջ կ'երեւին այս կերպարանքով յոյժ բազմաթիւ մարդիկ:

Այս կերպով երկու ցեղեր իւար խառնուելով կաղմեցին մեր հայ ժողովուրդը: Հետեւաբար մեր

հարազատ նախնիքները կ'ըլլան Ուրարտուի, Նախրիի հին ժողովուրդները և հնդեւրոպական Հայերը:



Թ. Դ. Ա. Ա

ՀԻՒ ՀԱՅԵՐՈՒ ԿՐՈՆԸ ԵՒ ԲԱՐՁԵՐԸ

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայերէն խօսող մեր նախնիքները, բուն Հայերը մանելով Հայաստան շինեցին գիւղեր, քաղաքներ, շէնքեր ևայլն: Ընդհանրապէս սովոր էին իրենց տուները փորել ժայռերու մէջ կամ հողի տակ: Անոնք կ'զբաղէին խաշնարձութեամբ, երկրագործութեամբ և որսորդութեամբ. կը դորձածէին դարեջուր:

Անոնք վաճառականութիւն ալ կ'ընէին կարաւաններով և լաստերով, զետի վրայէն:

Իրենց մէջ շատ յարգի էր ընտանիքը. կը յարգէին ծերունիները, իրենց առաքինութիւնն էր լաւ ձի հեծնել և սուտ չխօսիլ:

Կը պաշտէին երկինքն ու երկիրը, բնութիւնն ու ծառերը, սօսին, օճախն ու ընտանիքին գերեզմանը. ունէին աստուածներ ինչպէս Վահագն, Աստուած, Տիր ևայլն:

Հին ՀԱՅՈՅ ԲԱՐՔԵՐԸ . — Հնդկւրոպացի եկառոր Հայերը Հայաստան մանել հաստատութէն եաք երկար տարիներ անցան. անոնք տուն աեղ շինեցին իրենց վերջնական հայրենիքին մէջ . կանգնեցին զիւղեր ու քաղաքներ, մենաններ ու պալատներ : Ունեցան բազմաթիւ նահապեաններ ու իշխաններ, որոնք կառավարեցին երկիրը :

Հին Հայերը ընդհանրապէս իրենց տունները կը փորէին ժայռերու և հողին մէջ: Խոչոր սրահներ կը շինէին և սենեակներ, ուր կը բնակէին: Խոչոր ջրհոսի բերանի պէս զուռներէ կը մանէին ներս: Երկու դուռ կ'ունենային. մէկը՝ մարդոց համար, իսկ միուր՝ կենդանիներու համար: Կենդանիներն ալ կը բնակէին հողին մէջ փորուած այդպիսի սենեակներու մէջ:

Գիտէին զարեջուր շինել և խմել: Անոնց խմած զարեջուրը շաա բարկ, զօրեղ էր: Խոչոր զուռներու մէջ լեցուած կ'ըլլային, ուրկէ երկար և մէջը ծակ եղէցներով զարեջուրը կը ծծէին ու կը խմէին:

Հին ՀԱՅՈՅ ԿՐՈՆՅ. — Անոնք կը պաշաէին երկինքն ու երկիրը, կը յարգէին նաև կենդանիներն ու ծառերը, որովհետեւ, կը աեսնէին որ ծառերը ինքնիրեն կ'աճին ու կը մեծնան. կը կարծէին թէ անոնց մէջ հողի կայ, ինչպէս որ մարդուն մէջ հողի կենալով կը մեծնայ: Ամէնէն աւելի կը պաշաէին սոսի (զուռաղ) ծառը և ինքինքնին կը նուիրէին անոնց, որովհետեւ կը հաւատային թէ անոր տերեներուն խշառցները իրենց մեռնող հայրերուն հոգիներուն ձայնն է : Անոր տերեւներուն սոսափիւնէն զուռակութիւններ կ'ընէին :

Հայերը կը պաշաէին նաև վահազն աստուածը, որ քաջութիւն և իմաստութիւն կուտար զինքը պաշտողին : Անիկա ծագող արեւին աստուածն էր:

Հայերն ունէին ուրիշ աստուածներ ալ, ինչպէս Տիրը, Տիւը, Աստուածը ևայլն :

Անոնք կը յարդէին նաև իրենց օճախը և իրենց հայրերուն հոգիները: Երբ սեղան նստէին, սեղանին վրայ տեղ մը պարապ կը ձգէին, և այդ պարապ տեղ զը գնէին պնտակով կերպակուր, հաց: Ան մեռնող հայրերուն բաժինն էր: Հայերը կը հաւատային նաև թէ մեռնող հայրերու հոգիները կու զան և կերտակուրին հիւթը կը ճաշակին, բայց նիւթը չեն ճաշակիր:

Հին Հայերը երբոր հաստատուեցան Հայաստան, սկսան երկրագործութիւն ընկել և անասուններ պահել: Ունէին ոչխարներ, եղներ, կովեր, մանաւանդձիեր: Կը հանէին զինի, իւղ, թուղ, նուռ, սերկեւիլ, ձիթապառւղ. անտառներէն կը հանէին տախտակ, փայտ ևայլն:


Հին ՀԱՅԵՐՈՒԻ ՎԱՃԱՌԱԿՍՆՈՒԹԻՒՆԻ: — Այս բոլոր արդիւնքները մաս մը իրենց պէտքերուն համար կը զործածէին և մաս մըն ալ կը աանէին օսար երկիրներ և կը ծախէին, վաճառականութիւն կ'ընէին: Որպէսզի ձամբան զալերուն չտանդիպին և չկողոպտուին կարաւաններով կը ձամբորդէին:

Բայց ամէնէն աւելի գետերուն վրայէն կը ձամբորդէին լաստերով: Լաստերը կը շինէին ունենիրէ(սկօխւա), կը հիւսէին և վրան կաշխով կը պատէին: Գետին հոսանքին կը ձգէին և ստքի վըրայ կեցած մարդեր երկար փայտերով կը ղեկավարէին նուռը:

Երբեմն ալ տիկերով կը շինէին. տիկերը օղով կը լեցնէին, իրարու կը կապէին, վրան թեթե ատխակ կը գնէին և անոնց վրայ իրենց բեռները կը բեռցնէին:

Իւրաքանչիւր նաւի մէջ կը զանուէր էշ մը, մեծ նուռերուն մէջ ալ՝ աւելի: Անոնք կ'երթային Բա-


Բարելոն, հան կը ծախէին իրենց վաճառքը, նաւին
փայտերը և յարդն ալ կը վաճառէին և կաշիները
էշերու վրայ բեռցնելով, ցամաքով ետ կը դառնային:



Եփատ զետի վրայ լաստ

Գետն ի վեր չեխնկրնար երթալ, որովհետեւ հոսանքը
թոյլ չէր տար: Երբ Հայաստան դառնային, նորէն
նաւեր կը շինէին և գարձեալ կ'երթային Բարելոն:

Էկէտ լուի Տառլ Խոհիկ



Յոյն նշանաւոր պատմիչը՝ Հերոդոտոս շատ
հետաքրքրութեամբ և մանրամասնութեամբ կը նկա-
րագրէ հայ վաճառականներու նաւազնացութիւնն ու
գործերը :



Ժ. Դ. Ա.

ԱՌԱՋԻՆ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայ աւանդութիւնը կը պատմէ թէ, հայիսոս մեր նախնիքներն ունեցած են ցեղին առաջնորդները կամ նախավետները, որոնք կառավարած են հայ ժողովուրդը, զանոնք առաջնորդած են Հայաստան :

Այդ նահապետներու անունները մեզի հասած են Խորենացի հայ պատմիչին միջոցաւ, որ քաղած է հայ գլուխներու երգերէն։ Նշանառ նահապետներ եղած են Հայկ, Արմենակ, Արմայիս, Գեղամ, Արամ, Արա Գեղեցիկ, Անուստան, Զարմայ, Պարոյ, Հրայեայ, Երևանի ետքը :

Հայկը մեր նահապետներուն առաջինն է, որ իր ժողովուրդը կը մտցնէ Հայաստան, մեծ պատերազմ կը մղէ Վանայ ծովուն մօտ, կը շինէ Հայկաւելի քաղաքը։


Հայկի որդին Արմենակ իր ժողովուրդը կ'առաջնորդէ երասխ զետի հովիտը, Այլաբատեան դաշտը Արագած լեռան շուրջը։

Արմենա՛ի որդին էր Արմայիս. ան շինած է Արմայիր քաղաքը, որ եղած է գլխաւոր կեդրոնավայրը հայ նահապետներուն օրով։ Արմայիսի որդին էր Նարսյ, որ համբաւաւոր եղած է իբրև շատակեր։ Նարայի անունով կոչուած է Նիւսովի դաշտը։

Արմայիսի թոռնիկն էր Գեղամ. որ մեծ, աշքառու նահապետ մը եղաւ։ Անոր անունով Գեղամայ ծով կոչուեցաւ Հայաստանի ամենէն գեղեցիկ մէկ լիճը անուշիկ ջրերով։

ԽՈՐԵՆԱՑԻ ԵՒ ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ. — Հայիսոս մեր նախնիքները Հայաստան մանելէ և տեղացի բնիկներուն հետ խառնուելէ յետոյ, Հայաստանը դարձաւ մեր պատմական հայրենիքը։ Հան տեղի ունեցան շատ դէպքեր, ապրեցան մեր հայրերը։

Մինչև 500 թւռուականը, Քրիստոնէ առաջ, մեր պատմութեան համար զրաւոր արձանադրուածներ և աղբիւրներ չկան. այս շրջանը մութէ։ Զենք զիսեր ստոյզ կերպով թէ որո՞նք եղած են Հայաստանի առաջնորդ իշխանները։ Սակայն Մովսէս Խորենացի հայ պատմիչը օպուելով իր օրով հայ Գուսաններու եր



Մովսէս Խորենացի



Հայկ՝ Նահապետ

զերէն և հայ ծերու-
նիներու պատմութ-
իւններէն զրի առած
է մեր ազգին պատ-
մութիւնը և կը յիշէ
հայ Նահապետները :
Հայերու առաջնորդ-
իւնները կոչուած
են Նահապետներ :
Անսնք թագաւորներ
չէին, այլ զերդաստա-
նին, ցեղին հայրերն
էին. անսնք կը կա-
ռավարէին իրենց ժո-
ղովուրդը և կը պաշտ-
պանէին թշնամինե-
րուն դէմ :

Խորենացի կը յիշէ բազմաթիւ նահապետներու
անուններ, անսնց պարծերը կը պատմէ : Այդ նահա-
պետներէն շատերը չենք գիտեր թէ ի՞նչ զործեր կա-
տարած են, բայց կան նշանաւորները, որոնց ըրած
մեծագործութիւնները կը ներկայացնէ Խորենացի :

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ, 8ԵՂԻՆ ՄԵԾ ՀԻՄՆԱԴԻԲՐ. —
Այդ բազմաթիւ նահապետներուն էն նշանաւորը եղաւ
է Հայկ՝ որ հայրախօս հայերը բերած մացուցած է Հա-
յաստան. ան եղած է մեր ցեղին հիմնադիր մեծ նա-
հապետը : Ամէնէն նշանաւոր պատերազմը մղած է
Հայկ՝ Վանայ ծովուն մօտերը, Հայոց ձոր կոչուած
տեղը : Այդ տեղ Ասորեստանի մէկ մեծ բռնակալին
դէմ վճռական ճակատամարտ մը տեղի ունեցած է,
ուր Հայկ յաղթանակ տարած է : Թշնամիին մեռած
տեղը, պատերազմի դաշտը կոչած է Գերեզմանի : Հա-
յոց ձոր գաւառը կը զտնուի Վանայ ծովուն հարաւ

արեւմտեան կողմը :

Հայկ շինած է իրեն համար քաղաք մը, որ
կոչուած է Հալկաշէն : Այս քաղաքը կը գտնուէր
Վանայ ծովուն հիւսիսային արեւմտեան կողմը :

ԱՐՄԵՆԱԿ, ԱՐՄՍՅԻՍ եի ԳԵՂԱՄ . Հայկէն
յետոյ հայ աւանդական պատմութեան մէջ նշանաւոր
նահապետներ կը յիշուին Արմենակ, Արմայիս, Գե-
ղալ ևայլն : Արմենակ կը նկատուի Հայկի որդին,
որ Հայկէն յետոյ եղաւ իր ժողովուրդին վարիչ առուջ-
նորդը : Ան Հայերը տարաւ աւելի վեր, զէպի հիւ-
սիս արեւելք, երասի գետին հօվիտները, Արագած
Երան շուրջը :

Արմենակի կը յաջորդէ որդին Արմայիս, որ կը
շինէ Արմաւիր քաղաքը : Անկէ եաքը երկար ատեն
Արմաւիր կ'ըլլայ հայ նահապետներու բնակավայրը :
Արմայիսի մէկ որդին էր Շարալ, որ համբաւաւոր
էր իրքեւ շատակեր . Արմայիս զայն բնակեցուց Արա-
գածի դաշտին մէջ, որ Շարայի անունով կոչուեցաւ
Շիրակ : Շիրակի դաշտը շատ պտղաբեր երկիր մըն է
Մեր հայրերը առած մունէին և կ'ըսէին.

« Թէ քո Շարայի որկորն է,

Մեր Շիրակայ ամբարքն չեն : »

Արմայիսի թոռնիկն էր Գեղալ, որ եղաւ աչք-
առու և սիրելի նահապետ մը . անոր անունով Հա-
յաստանի ամէնէն ցեղեցիկ մէկ լիձը կոչուեցաւ Գե-
ղալալ ծով, որ ունի անուշ ջուր և առաս ձկներ :
Այդ լիճն քովի գաւառը կոչուեցաւ Գեղարբունիք :

Գեղամի որդին էր Սիսակ, որուն անունով Գե-
ղամայ ծովին արեւելքան և հայրաւային կողմը տա-
րածուած երկիրը կոչուեցաւ Սիսական կամ Սիւնիք :



ԺԱՅ. ԴԱՅ. Ա

ՀԱՅ ՆԱՀԱՊԵՏՆԵՐ

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հայ նահապետներուն մէջ աչքառու դէմք մըն է Արամ, որ Ուրարտուի էն նշանաւոր թագաւորին անունն է: Հայերը, երբ Ուրարտուի ժողովուրդը հայ դարձուցին և բոլորը սկսան հայերէն խօսիլ, իրենց նահապետը համարեցին Արամէն, որուն անունը կոչեցին Արամ:

Արա Գեղեցիկ և Անուշաւան սիրով, հոգիով հայ իշխաններու տիպարներ են. Արա Գեղեցիկ կը մնայ հաւատարիմ իր կնոջ. աւելի կը նախընտրէ մեռնիլ քան թէ օտար իշխանուհի մը, Շամիրամի ամուսինն ըլլալ:

Անուշաւան փոքր եղած ատեն նուիրուած է Սոսիներու Անսառին, հայ նահապետներու ողիներուն, որպէսզի միշտ հայ մնայ հոգիով ու սրտով: Այդպէս ալ եղած է. ան գերի ատառած է Ասորեստան, բայց օտար երկրին մէջ և օտար պալատի մէջ ան միշտ մնացած է հայ, խելացի, խոհեմ իշխան մը:

Մինչև Պարոյ նահապետը կարեւոր գործեր կատարող նահապետներ չեն եղած:

Ա. Բ Ա. Մ Ն Ա Հ Ա Պ Ե Տ . Հայ աւանդական պատմութեան մէջ մեծ անուն ունի Հայոց Արամ նահապետը: Մենք դիմենք արդէն Ուրարտուի Արամէ թագաւորը շտամ մեծ զործեր ըրած և համբաւառոր եղած է: Բնական է որ անսիկա իր ժողովուրդին ամէնէն սիրելի և յարգելի անունը թողուցած է: Երբ հայախօս Հայերը խառնուեցան Ուրարտուի ժողովուրդներուն հետև ըսլորը սկսան հայերէն խօսիլ, անոնք սկսան պարծանքով յիշել միշտ իրենց Արամէ իշխանը, որուն անունը կրծառառելով եղաւ Արամ:

Անշուշտ այսպիսի քաջ մարզու մը անունը հայերն սկսան դնել իրենց զաւակներուն ալ: Արամ անունով այդ հայ իշխաններուն մէջ ալ զօրաւոր անհատներ եղած են. հայերը զանոնք բոլորն ալ մէկ անունով յիշած են: Արամ :

Ա. Բ Ա. Գ Ե Ղ Ե Ց Ի Կ , Ա. Ն Ո Ւ Շ Ա Խ Ա Ն . — Հայ նահապետներուն մէջ յոյժ համբաւառոր եղած է Արա Գեղեցիկ: Ինչպէս Արամի, նոյնպէս Արա Գեղեցիկի պատմութիւնը մենք աեսած ենք Հայոց պատմութեան տարբական զիրքերուն մէջ: Արա Գեղեցիկ հայ ժողովուրդին ամէնէն սիրելի մէկ հերոսն է, անսիկա լաւ համբաւած է պատերազմիլ և մեռնիլ, քան թէ ուրանալ հայութիւնը, օտար թագուհիի մը՝ Շամիրամի ամուսինն ըլլալ:

Արա Գեղեցիկի որդին կը յիշուի Կարդոս, որ իր հարը պէս քաջ և աղնիւ հայու տիպար մըն է:

Կարդոսի որդին էր Անուշաւան, որ փոքրիկ մտառեկ եղած ատեն նուիրուած է Սոսեաց անտառի հայկական աստվածներուն: Մեր պապերը կը պաշտէին Սոսի ծառերը, որովհետեւ կը կարծէին թէ իրենց հայրերուն, նահապետներուն հոգիները կը մտնեն այդ ծառերուն մէջ և անոնց աերեներուն

սոսափիւնը նոյն հոգիներու ձայնն է։ Անուշաւան
նուիրուեցաւ իր հայրերու հոգիներուն, որպէս զի



Անուշաւան սօսիներուն կը նուիրուի
հարազատ հայ մնայ։ Իբրև հայ զործէ։
ՈՒՐԻՇ ՆԱՀԱՊԵՏՆԵՐ. — Անուշաւանէն ետք
ուրիշ բազմաթիւ հայ նահապետներ եղած են, որոնց
մէջ կը յիշուին Պարհան, Զաւան, Շաւարշ, Նորար,
Զարևայր և այլն։
Անոնց զործերը չեն յիշուիր։



ԺԲ · Դ Ա Ս

ՊԱՐՈՅՐ ԵՒ ՀՐԱԶԵԱՅ

Ա Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Սկայորդիկ որդին էր Պարոյր։ Անոր ժամանակ Մարաց Կիաքսար թագաւորը զօրք ժողվեց և Նինուէի վրայ գնաց, բայց բարբարոսներուն պատճառով ետ զարձաւ ու անոնցմէ յաղթուեցաւ։ Քանի մը տարիներ ետքը, խընջոյքի մէջ սպաննեց անոնց գլխաւորները և մը նացածները վռնտեց։ Բարեկամ եղաւ Պարոյրի և Բարելոնի իշխանին, որոնց հետ Նինուէն գրաւեց և կործաննեց։ Սարդանաբալ ինքզինքն այրեց։ Կիաքսար թագով պատուեց Պարոյրը, որ եղաւ Հայերուն առաջին թագաւորը։

Պարոյրի յաջորդեց Հրաչեայ, որ իր հօրը պէս բարեկամ եղաւ Մարաց և Բարելացւոց հետ։ Նարուգործոնոսորի օգնութեան երթաւով, Երուսաղէմը առին և Հրեայ գերիներ բերին։ Հրաչեայ փոքիկ զաղթականութիւն մը բերաւ և նստեցուց Հայաստան։ Սմբատ կամ Շամբատ Հրեայ իշխանէն սերեցան Բագրատունիները։ Հրաչեայի յաջորդներու մասին բան մը չենք գիտեր գժրախտաբար։

ՊԱՐՈՅՑ ԵՒ ԿԻԱԲՍԱՐ. — Սկայորդի նահապետին որդին էր Պարոյ, որ Հայոց առաջին թաղաւորը եղաւ:

Պարոյի ժամանակ Ասորեստանի կամ Նինուէի թաղաւորները չառ զեղիս ու անպարկեցան կեանք մը անցնելով ակարացած էին: Իրենց երկիրը աղքատացած էր:

Ասորեստանի արևելեան կողմը երկիր մը կար, ուր կը բնակէին Մարերը կամ Մեղացիները: Այդ երկրին իշխանն էր Կիաքսար: Կիաքսար իր զինուորները կանոնաւորեց, երկիրը բարեկարգեց և իր թշնամիները պատմեց: Ան ուղեց Նինուէի վրայ երթալով քաղաքը պաշարել և զրաւել, Ասորեստանի թաղաւորն ալ սպաննել: Առաւ իր զինուորները և զնաց պաշարեց:

Բայց ուրիշ բարբարոս վայրենի ժողովուրդներ՝ Սկիւթացիները իր երկիրը յարձակեցան և սկսան թալանել: Կիաքսար ստիպուեցաւ իր երկիրը պաշառանելու համար թողուլ Նինուէն և ետ դառնալ: Կոռւեցաւ բարբարոսներուն հետ և յաղթուեցաւ: Խռնարձեցաւ և պարաւարուեցաւ տուրք տալ:

Քանի մը տարի վերջը սկսաւ ուրիշ դրացի իշխաններու հետ բարեկամութեան գաշինք հաստատել: Պարոյ իշխանին հետ ալ բարեկամացաւ: Օր մը բարբարոսներուն զիխաւորները խնջոյքի հրաւիրեց և խնջոյքի մէջ զինուղած տաեն՝ իր զօրքերով սպաննեց զանոնք: Սկսաւ բարբարոսները վատարել իր երկրէն:

Անկէ ետքը Պարոյի և Բարելոնի իշխանին հետ նորէն յարձակեցաւ Նինուէի վրայ: Քաղաքը պաշարեցին և զրաւեցին: իսկ Ասորեստանցիներու թաղաւորը, Սարգանարար, թշնամիներուն ձեռքը չիշնալու համար, ինքինքը կրակը ձգեց և իր ըն-

տանիքին հետ իր պալատի բոցերուն մէջ այրեցաւ: Կիաքսար չնորհակալ ըլլալով Պարոյին՝ անոր թաղաւորական թագ տուաւ: Այսպէսով Հայերը Ասորեստանցիներուն տուրք տալէ աղատեցան և ունեցան իրենց թաղաւորը:

ՀԻՄԿԵԱՅ ԵՒ ԻՐ ՅԱԶՈՐԴԻՆԵՐԸ. — Երբ Պարոյը մեռաւ, անոր յաջորդեց իր որդին Հրաշեալ: Անոր այս անունը առւած էին, որովհետեւ զեղեցիկ զէմք, պայծառ երես ու բացեղէն աչքեր ունէր:

Հրաչեայ իր հօրը պէս բարեկամ եղաւ Մարաց և Բարելացւոց հետ: Եւ այդ պատճառով Բարելոնի Նուբուզուրնոսոր թաղաւորին օգնութեան զնաց:

Նաբուզուրնոսոր և Հրաչեայ, ժաղվելով իրենց զինուորները, արշաւեցին Հրեաներու երկիրը, Երուսաղէմի վրայ:

Երկար ժամանակ պաշարեցին քաղաքը և սառտիկ սով ինկաւ բնակիչներուն մէջ: Անոնք ստիպուեցան անձնատուր ըլլալ: Նաբուզուրնոսոր Հրեաներու թաղաւորին աղաքը՝ սպաննել տուաւ անոր աչքին առջեւ, յետոյ անոր աչքերը փորել տուաւ և Բարելոն զերի զրկեց:

Հրաչեայ և Նաբուզուրնոսոր մատն Երուսաղէմնոն փառաւոր տաճար մը կար, Սողոմոն Խմառաւնի շինած տաճարը: Մատն անոր մէջ, թանկագին առարկաներ առին և ապա տաճարն ու քաղաքը կործանեցին:

Բազմաթիւ Հրեաներ զերի տարին Բարելոն: Հըրաչեայ այդ հրեայ զերիներէն խումբ մը բերաւ բընակեցուց Հայաստանի մէջ: Այդ զերիներուն մէջ նշանաւոր էր Շամբար կամ Սմբատ անունով իշխանը, որուն սերունդէն առաջ եկաւ Բազմատունեաց մէծ նախարարութիւնը:

Հրաչեայի յաջորդեցին մէկ երկու թաղաւոր Ազգ. Պատմ. Միջին Ա.

ներ, որոնց մասին դժբախտաբար մեծ բան մը չենք
դիտեր. անոնց պատմութիւնը կորսուած է:



ԺԲ. ԴԱ. Ս

ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Ա. Մ Փ Ո Փ Ո Կ Մ

Հրաչեայէն ետք աչքառու թագաւոր մը
եղաւ Երուանդ, որ քիչ ապրած ըլլալուն հա-
մար կոչուած է Սակաւակեաց:

Երուանդի որդին էր Տիգրան Ա., որ շատ
գեղեցիկ, խելացի և քաջ մէկն էր. ան կարգի
դրաւ իր զինուորները, ձիւորները բազմա-
ցուց, նոր զէնքեր տուաւ անոնց ամէն մէկին
ձեռքը. ապա քալեց Հայաստանի արևմտեան
կողմը. բարեկամացաւ Պարսից կիւրոս թագա-
ւորին հետ, որ Աժդահակի թոռն էր և կու-
զէր իր պապին ձեռքէն խլել իշխանութիւնը:
Աժդահակ վախէն Երազ մը տեսաւ. Հայոց
լեռներէն մէկին վրայ կին մը Երեք կըտ-
րիծ կը ծնի, Երեքը մէյ մէկ կենդանիի վրայ

մէյ մ կ կողմ կ'երթան. Երրորդը վիշտապի մը
վրայ նստած կու զայ կ'սպաննէ Աժդահակը. որ
Երազէն արթննալով խորհրդականները կը կան-
չէ, խորհուրդ հարցնելու համար :

ԵՐՈՒԱՆԴ ՍՍԿԱՆԱԿԵԱՅ. — Հրաչեայէն ետք
Հայաստանի թագաւորներէն մէկն էր Երուանդ, որ
կարճ ժամանակ թագաւորած ըլլալուն համար կոչ-
ուած է Սակաւակեաց : Երուանդ ստիպուեցաւ իր
Երկրին վրայ յարձակում գործող Մարերուն դէմ
կռուիլ. պարառուելով պարտաւորուեցաւ խոնարիլ
և տուրք վճարել: Սակայն աւելի ետքը զլուխ վեր-
ցուց Աժդահակի դէմ. այն ատեն Աժդահակ Երուանդի
վրայ զրկեց իր թոռը՝ կիւրոս, որ խարէութեամբ
մտաւ Հայաստան; ստիպեց Երուանդը վճարել իր
տուրքը և բարեկամանալ :

ՏԻԳՐԱՆ Ա. ԵՐՈՒԱՆԴԵԱՆ. — Տիգրան մեր
թագաւորներուն ամէնէն զօրաւորը, ամէնէն իմաս-
տունը և քաջն էր: Մեր պապերն ու զուսանները
այսպէս կը նկարազրէին Տիգրանը:

Անոր մազերը չէկ էին ու զանգուր, երեսը զը-
ռուարթ, սպիտակ ու կարմիր, քաղցրահայեաց, մար-
մազ յաղթանդամ, թիկունքը լայն, ազդրները լե-
ցունկեկ, սաները չափաւոր. իսկ ինքը պարկեցաւ էր ու
չափաւոր ամէն բանի մէջ, թէ կերուխումի և թէ
զուարձութիւններու մէջ: Նա ոմէնքին վրայ հաւա-
սար աչքով կը նայէր, արդար էր և դժան :

Իր Երկիրը բարեկարգելու համար հոգ տանելով
կանոնաւորեց իր զինուորները: Հեծելազօրքը բաւմա-
ցուց, հետեւակ զօրքը կրթեց և ամէնուն ձեռքը սուր,
ամէզ ու նիզակ տուաւ, վահաններով ու զրահներով
զինեց:

Տիգրան այսպիսի ընտիր զինուորներուն զըլու-

Խը անցնելով արշաւեց Հայաստանի արևմտեան կողմը և դրաւեց չառ երկիրներ ու անոնց վրայ հարկ դնելով դարձաւ իր հայրենիքը :

Հայերն սկսան հարստանալ, վաճառականութիւն ընել, իրենց պէտք եղած նիւթերը հեռու աեղերէ կը բերէին . անկէ եաքը սկսան աղէկ հազնի ու լաւ ապրիլ :

Տիգրանի ժամանակ Մարաց թափաւորն էր Աժդահակ : Անոր թոռը՝ աղջկան զաւակն էր Կիւռու . որ Պարսիկներուն իշխանն էր : Կիւռոս կուզէր իր պապին ձեռքէն թափաւորութիւնը խլել, առոր Համար բարեկամացաւ Տիգրանի հետ :

Աժդահակ իմանալով Կիւռոսի և Տիգրանի բարեկամանալը՝ շատ վախցաւ . զիշեր ցերեկ կը մտածէր Եր վիճակին վրայ :

Դիշեր մը սոսկալի երազ մը տեսաւ : Իբրևու թէ Հայոց լեռներէն մէկին վրայ ծիրանի հազած կին մը նստած էր, նա յանկարծ երեք չափահատ կարիքներ ծնաւ : Անոնցմէ առաջինը առիւծի մը վրայ նստած արեւմտեան կողմը դիմեց . երկրորդը ինձի մը վրայ նստաւ ու դիմեց դէպի հիւսիս . իսկ երրորդը՝ անազին վիշտով մը սանձելով յարձակեցաւ Մարաց աշբութեան վրայ :

Երրորդը առիւծի նման թեւեր առած հստաւ Աժդահակի պալատին մօտ, որուն տանիքին վրայ Աժդահակ զան կը մասսացանէր, թուաւ գէպի թափաւորը և կուզէր կուռքերը կարծանել . Աժդահակ մէջ մտաւ ու կոռի բռնուեցաւ այլ կարիքին հետ, բայց յաղթուեցաւ ու սպաննուեցաւ :

Աժդահակ սարսափած արթնցաւ և իր մօտ կանչեց խորհրդականները, անոնց պատմեց իր երազը ու խորհուրդ հարցաւց :

ԺԳ . Դ Ա Ս

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԻՐ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Ա. Մ Փ Օ Փ Ո Ւ Մ

Աժդահակ հետեւելով իր խորհրդականներու խորհուրդին, ամուսնացաւ Տիգրանուհիի հետ, ուզեց գործիք ընել զայն, սպաննելու համար Տիգրանը, բայց Տիգրանուհի տեղեկացուց իր եղբօրը : Երբ Աժդահակ Տիգրանը հրաւիրեց իրու թէ բանակցելու համար, Հայոց արքան զօրքով զնաց, քոյրն աղասիեց և Աժդահակին յաղթեց . զերիները ատարաւ և Մասիսի մօտ բնակեցուց . անոնցմէ սերած են Մարացան նախարարական զերդաստանը :

Տիգրանի յաջորդներէն է Վահագն, որ իր քաջութեան համար իբրև աստուած պաշտուած է Հայերէն և Վրացիներէն : Անկէ ետք մէկ քանի անձանօթ իշխաններ եղած են . անոնցմէ մէկն է Վահն . աս անձանօթ իշխաններուն օրով Պարսից Դարեն թափաւորը արշաւեց Հայաստան և հարկատու գարձուց . Հայ թափաւորներէն նշանաւոր եղած է Վահն, որ Մեծն Աղեքսանդրէն սպաննուած է:

Տիգրան եկ ԱժԴԱՀԱԿԻ ԵՐԱԶԲՆ . — Աժդահակ
և իր խորհրդականները մտածեցին խարդախութիւն-
նով սպաննել կամ թւռնաւորել Տիգրանը: Աժդահակ
դեսպան զրկեց ընծաներով Տիգրանի եւ խնդրեց ,
որ Տիգրանուհի քոյրը իրեն կնութեան տայ: Տիգրան
ընդունեց եւ իր քոյրը զրկեց Մարտասան: Աժդա-
հակ պատուով ընդունեց Տիգրանուհին:

Օր մը Աժդահակ Տիգրանուհին ըստաւ.

— Դուն չես զիսեր թէ սրչափ նախանձոտ է
Տիգրանի կինը՝ Զարուհին . ան աչք անկած է քու-
վրայ եւ մերդէմ կը զրգուէ Տիգրանը , որպէսզի Տիգ-
րանը Մարտերու թագաւոր ըլլայ եւ ինքն ալ թա-
զուհի: Հնար մը զտիր այս խայտառակութեան վերջ
մը դնելու համար:



Հին Տիգրանակերտի աւերակները

Տիգրանուհի շուտով հասկցաւ Աժդահակի միտ-
քը , հաւասարիմ մէկու միջոցաւ զաղանի իմաց որ-
ուաւ Տիգրանին՝ Աժդահակի խորհնորդը :

Ուստի երբ Աժդահակ Հայոց թագաւորը հրաւի-
րեց որ երկու երկիրներուն սահմանագլուխը զայ՝ իբր
թէ կարեւոր զործի մը վրայ խորհրդակցութիւն ը-
նելու համար , Տիգրան իր զօրքն առաւ եւ Մարտա-
վրայ զնաց:


Տիգրանուհի յարմար միջոցը զատւ իր եղբօրը

բանակը փախչելու համար: Կոիւն սկսաւ . Տիգրան
յաղթեց . շատերն սպաննուեցան: Աժդահակի առա-
ջին կինը՝ Անոյշ և թագաւորական ցեղէն բազմաթիւ
աղջիկներ ու պատանիներ զերի ինկան:

Տիգրան իր այդ զերիները տարաւ նստեցուց
Մասիս լեռան մօսերը: Անոնցմէ առաջ եկան Մու-
րացան (այսինքն՝ Մարտա) նախարարութիւնը:

Տիգրանի բարեկամ կիւրոսը աէր եղաւ Աժդա-
հակի թագաւորութեան ու երկրին:

ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ . — Աւանդական պատ-
մութեան համեմատ Տիգրանի յաջորդն է անսր մէկ
որդին Վահազն , որ իր քաջազործութիւններուն հա-
մար շփոթուած է Վահազն աստծուածին հետ : Մեր
երգիչները զարմանալի բաներ կը պատմեն անոր
մասին . կ'ըսէին թէ վիշապներուն հետ կոռուծ և



Յարդգողի նախապարհը

յաղթած է ան. այդ պատճառով կոչուած է նաև Վիշապախաղ (վիշալ .սպանող) : Կոչուելով դարձեալ թէ Ասորոց Բարշամ նահապետին յարդը յափշտակած ու երկինք ատրած է , բայց ձամբան յարդը թափթը ֆելով ասաղերու փախուած է : Մինչև հիմակ կայ և Յարդգողի ձանապարհ կը կոչուի :

Ոչ միայն Հայերը այլև Վրացիները անոր արձոնը կանգնած էին և կը պաշտէին զոհերով . զայն կը նմանցնէին նաև առաօտուն ծագող արեւին :

ՎԱՆ , ԴԱՐԵՆ , ՎԱԶԵ ԵՒ ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ . — Վահագնէն ետք եղած են մէկ քանի հայ իշխանուր , բայց անոնց վրայ բան մը չենք զիտեր : Անոնց մէջէն մէկն էր Վան , որուն անունով Շամբաւակերտ քաղաքը կոչուեցաւ Վան , իսկ Աղի կամ Բզեռւնեաց ծովը՝ Վանալ ծով :


Այս անծանօթ հայ իշխաններուն օրով էր որ Պարսից թագաւոր եղած էր Դարեն . ան շատ զօրաւոր իշխան մըն էր : Դարեն : ուզելով Հայերը բոլորովին նուածել , յարձակում գործեց մեր երկիրը քանի մը տնկամ . Հայերը շատ մեծ զիմաղբութիւն ցոյց տաւին , բայց ամէնէն վերջը պարասւեցան և սոխուեցան հարկասու ըլլալ Պարսիկներուն :

Նոյն պէս այդ անծանօթ հայ իշխաններէն մէկն էր Վանի , որ քաջ մարդ մըն էր :

Մեծն Աղեխանից բազմաթիւ զօրքով կարշատէ Պարսիկներու երկիրներուն վրայ . որովհետեւ Վանէ Պարսից թագաւորին բարեկամն ու զաշնակիցն էր , իր զինուորներով օգնութեան կը փութայ . Պարսից թագաւորին :

Մեծ պատերազմ կը մղուի իսոս ըսուած դաշտին մէջ . յետոյ Արքելու կոչուած քաղաքին մօտ : Յոյնեւ ըը կը յարձակին Պարսիկներուն վրայ , որոնք կը

փախչին . Հայերը աեսնելով որ Պարսիկները փախուած կուտան , իրենք ալ կը քաշուին . Վահէ կ'առ-



Աղեխանից ձի նեծած կը կոռուի :
ոէ իր զինուորները եւ կը քաշուի Հայաստան :
Մեծն Աղեքսանդր ուզեց հնազանդեցնել Վահէն ,
առար համար քալեց անոր վրայ . Վահէ ոէմ ելու ա-
նոր եւ քաջարար կոռւեցաւ . սակայն կոռուի միջո-
ցին Աղեքսանդր նետով մը սպաննեց զայն :
Հայաստան անկէ ետքն ինկաւ Աղեքսանդրի իշ-
խանութեան տակ :



ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

ԺԴ. Դ Ա Ս

ԱՐՏԱՇԵՍ ԵՒ ԶԱՐԵԼ

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Վահէի մահէն ետք Մեծն Աղեքսանդր Հայց վրայ կուսակալ կարգեց Միհրան անուն օտար մէկը. Աղեքսանդրի մեռնելէն ետք իրեն հինգ զօրապետներն իրենց մէջ բաժնեցին ամէն երկիրներն ու տիրեցին. զօրապետներէն մէկն էր Սելիւկոս. ան իր իշխանութեան ներքե առաւ Հայաստանը; Հայ իշխան մը Եղուարդ կամ Արտարդ ապօտամբեցաւ և կէս անկախ եղաւ:

Հայաստան երկու մասի բաժնուած էր . այդ մասերը կը կոչուէին Մեծ Հայք, Փոքր Հայք: Մեծ Հայքի իշխանն էր Արտաշէս, իսկ Փոքր Հայքինը Զարեհ: Արտաշէս ապօտամբեցաւ և ինքը ինքը յայտարարեց թագաւոր: Աննիբալի խորհուրդով շինեց Արտաշէս քաղաքը երասխ գետին վրայ:

ՀԱՅԵՐԸ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Երբ որ Վահէ մեռաւ, Հայաստանը ինկաւ մեծըն Աղեքսանդրի իշխանութեան տակ:

Աղեքսանդր Մակեդոնացին երբ տէր եղաւ Հայաստանի, անոր վրայ կուսակալ զրաւ Միհրան անուն օտարական իշխան մը:

Աղեքսանդր Մակեդոնացին դեռ երիտասարդ էր երբ մեռաւ: Անոր զօրապետները սկսան անոր զրաւած բալոր երկիրները իրենց մէջ բաժնել և կառավարել: Անոնցմէ մէկն էր Սելիւկոս, որ կամաց կայաց իր ձեռքբն տակ առաւ Սոխական երկիրները: Հայաստան երկու մասի բաժնուած էր այն առեն: Մեծ Հայք և Փոքր Հայք: Այդ երկու մասերուն վրայ իրարու ետեւէ սկսան իշխել օտար եւ հայ իշխանները կամ կուսակալները:

Հայերը, մանաւանդ Մեծ Հայքի իշխանները, կուլէին անկախ ըլլակ, ասոր համար մէկ քանի անգամ ապօտամբեցան. բոււկան յաջողեցան. որովհետեւ գրեթէ կէս մը անկախ եղան:

Այդ նշանաւոր իշխաններէն մէկն էր Եղուարդ կամ Արտարդ: Ան շատ քաջ մարդ էր, հայրենասէր և ազատատէր: Ան ժողվեց հայ կարիճներ, զէնք տըռաւ անոնց, քաջալերեց եւ ապօտամբեցաւ:


Բայց Սելիւկոս պատերազմեցաւ Աղուարդի դէմ: Հայերը շատ քիչ էին եւ շատ զէնք չունէին, ասոր համար յաղթուեցան. ուստի հապատակեցան Սելիւկեաններուն, բայց կէս մը պահեցին իրենց անկախութեւնը :

ԱՐՏԱՇԵՍ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ՀԱՐՍՈՒԹԵԱՆ . — Մեծ Հայքի նշանաւոր իշխաններէն մէկն էր նաեւ Արտաշէս . անոր օրով Փոքր Հայքի վրայ իշխան էր Զարեհ:

Արտաշէս քաջ իշխան մը եղաւ . ուզեց Հայաստանի երկու մասերն ալ միացնել : Անիկա նախաշխանեցաւ սիրելի ըլլալ Հայերուն՝ ամէն կերպով . կանոնաւորեց իր բանակը եւ ապաստամբելով ինք գինքը անկախ հոչակեց . թագաւոր եղաւ եւ իր առունով զրամ կարել առւաւ :

Արտաշէս եղաւ հիմնադիրը Արտաշիսեան Հարատուքեան : Հայ լեզուն տարածեց Հայաստանի մէջ եւ պարագրեց ամէնուն հայերէն խօսիլ :

Անոր ժամանակ կարքեղանացի հոչակաւոր զո-



Անիկա

բապետ մը՝ Անիկա, Հոսմայեցիներէն յաղթուելով, փախաւ եւ եկաւ Հայաստան, Արտաշէսի մօտ :

Արտաշէս սիրով ընդունեց զայն եւ իր պալատին մէջ պահեց : Ան իրեն հիւր եկող այլպիսի նը-

շանաւոր մէկը մարդու չէր յանձներ . Աննիրալի հետ խնջոյքներ կը սարքէր, սրսի կ'երթար :

Անգամ մը սրսի ժամանակ Աննիրալ գեղեցիկ տեղ մը տեսաւ . Երասխ գետը եւ Մեծամօր գետակը իրար խառնուած ակղը : Էսրհուրդ առւաւ անոր սր այդ տեղ քաղաք մը չինէ . երեք կողմը ջուր եւ մէկ կողմն ալ ապաստ բլուրներ ըլլալով անառիկ քաշաք մը կրնար ըլլալ :

Այդպէս ալ եղաւ . Արտաշէս շինեց ամսւր պարիսպներով ու բերզերով քաղաք մը, որուն անունը զրաւ Արտաշատ, այսինքն Արտաշէսի բաղաք :

Արտաշէս երկար ժամանակ իշխելէն եւ երկիրը խաղաղ կերպով կառավարելէն յետոյ, երբ կը պատրաստէր Փոքր Հայքն ալ իրեն իշխանութեան կը-ցել, մեռաւ :



ՃԵ . Գ Ա Ս

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ



Ա Մ Փ Ա Փ Ո Ւ Մ

Տիգրան Բ. Արտաշէս Հայկաղնի յաջորդներէն մէկն էր, որ իր հայրը մեռած առեն Պարթևներուն մօտ պատանդ կը գտնուէր : Ան զահը բարձրացաւ, իր առաջին զործը եղաւ

կազմակերպել իր բանակը : Դաշնակցեցաւ
Միհրդատ թագուորին հետ, որուն Կղէոպատրա
աղջկան հետ ամուսնացաւ : Պարթևներու թա-
գաւորը յարձակեր էր Հայոց վրայ, Տիգրան
յաղթեց անոր և ետ առաւ իր տուած հողերը
ու կոչուեցաւ Արքայից Արքայ:



Մեծի Տիգրան

Առանց արիւնահեղութեան տէր եղաւ Ա-
ստիփի . զրաւեց Պտղոմայիսը և զլխատեց անոր
Կղէոպատրա թագուհին : Երուսաղէմի Աղեման-
դրա թագուհին հնազանդեցաւ անոր : Ան շի-
նեց քաղաքներ ու շէնքեր . 300,000 Յոյներ
բնակեցուց Տիգրանակերտ : Զորս թագաւորներ

անոր թիկնապահներն էին : Տիգրան ինքզինքն
իրքի աստուած պաշտել կուտար :

Մեծն Տիգրանի ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵԲԼ : — Ար-
տաշէսի յաջորդներէն մէկը եղաւ անոր սերուղէն
Տիգրան Մեծն Հայկազն, որ իր հայրը մեռած առեն
կը գանուէր Պարթևներու թագաւորի արքունիքը .
ան պատանդ տարուած էր : Տիգրան պղտիկ հասակէն
լաւ կրթուած էր զինալարժութեան մէջ . ան քաջ
էր, հապրտ և փառակէր :

Տիգրան իր հօրը մահուան լուրն առնելուն պէս
իր երկիրներէն մաս մը տուաւ Պարթեւներու թա-
գաւորին : Ան իր հայրերուն գահը բարձրանալով
իր առաջին զործն ըրտ կազմակերպել իր բանակը :
Տիգրան կարգ կանոն մացուց նաև երկրին մէջ և
ուշադրութիւնը դարձուց Հայաստանի թշնամիներու
վրայ . յարձակեցաւ անոնց վրայ և մի առ մի հնա-
զանդեցուց բոլորը :

Պոնտոսի Միհրդատ թագաւորը տեսնելով Տիգ-
րանի ոյժը և քաջութիւնը, զաշնակից եղաւ անոր
հետ : Միհրդատ իր Կղէոպատրա աղջիկը կնութեան
տուաւ Տիգրանի : Երկու բանակները միասին կը կըռ-
ուէին . Կապադովկիան գրաւելէն ետքը, Տիգրան իր
դաշնակցին և աներոջ յանձնեց ու ինքը դարձաւ
Հայաստան :

Պարթևներու Արշական թագաւորը գորքով Հա-
յաստան կուզար, Տիգրանէն ասացնութեան պատիւը
ետ իրելու համար : Երկու բանակները ճակատեցան
Երասիփ ափերուն վրայ : Արշական սպաննուեցաւ և
Պարթեւներուն երկրին մեծ մասը ինկաւ Տիգ-
րանի ձեռքը :

Այս ժամանակ Սելեւկեան իշխանութիւնը շատ

տըկարացած էր: Երկու եղբայրները կուղեին թաղաւոր ըլլալ եւ իրարու հետ կոփու կ'ընէին, իրարու զինուրները կը կոսորէին: Ասորիքի (Եփրատ գետէն մինչեւ Միջերկրական տարածուած երկիրը, որ հիմակ կը կոչուի Սիւրիա) ժողովուրդը ձանձրանալով իրենց թաղաւորներուն ընտանեկան կոիւներէն, Տիգրանին դիմեց, որ իրենց թաղաւոր ըլլայ կամ միջնորդէ:

Տիգրան իր ձեռքին տակ ունէր 500, 000 (կէս միլիոն) զինուր: Ան քալեց Սելեւկեան երկիրներուն վրայ: Տիգրանի անեղ բանակը տեսնելով, խեղճ Սելեւկեանները սարսափեցան, Տիգրան առանց լուրջ ընդդիմութեան զրաւեց Ասորիքը: Անտիոքը (Անթիոք), որ Սելեւկեաններուն մայրաքաղաքն էր, Տիգրանի գլխաւոր քաղաքներէն մէկը դարձաւ, ուրուն վրայ կուսակալ կարգեց իր զօրավարներէն: մէկը:

Տիգրան իր զէնքը աւելի առաջ տանելով հասաւ մինչեւ Պաղեստին (Հրեաներուն երկիրը): Պտղոմայիս (Աբիա) քաղաքը պաշարեց եւ առաւ: անոր Կղէոպատրա թաղուհին գլխաւեց:

Հրեաները սաստիկ երկիւղի մէջ ինկան, երբ լսեցին որ Տիգրան մտադիր է իրենց վրայ արշաւելու: Ուստի երբ Տիգրան Պաղոմայիսի առջև կը զանուէր, Երուսաղէմի Աղեխանդրա թաղուհին մէծամեծ ընծաներով պատգամաւոր զրկեց անոր, յայտնելով թէ կը հպատակի Հայոց թաղաւորին:

Տիգրան իր անցած աեղերէն քաղաքներ կործանեց, անոնց յոյն, հրեայ բնակիչները քշեց Հայաստան: Յունական տասը քաղաքներէն 300, 000 հոգի տարաւ բնակեցուց Տիգրանակերպի մէջ:

Իր երկիրն այնքան ընդարձակ էր որ բաղմաթիւ աղղեր հպատակեցան անոր: Կովկասէն մինչեւ Երուսաղէմ, Պարմեներու երկիրէն՝ Պարսկաստանէն մինչեւ

Միջերկրական ծով, անոր ձեռքին տակ կը գտնուէին:

Ան կը կոչուէր «Արքայից Արքայ», այսինքն Թագաւորներու թագաւոր: Զորս զահազուրկ թագաւորներ թիկնապահի պաշտօն կը վարէին անոր մօտ: Երբ ձիով տեղ մը երթար՝ անոնք պարզ շապիկներ հազած անոր երկու քովին կը վազէին սոտքով: Իսկ գահը նստած ժամանակի, անոր առջև կը կանգնէին, իբրև հնազանդութեան նշան ձեռքերը խաչածե բըռնած: Ան յարդանք կը պահանջէր ամէնքէն: ինքինքը Աստուծոյ տեղ կը դնէր: Սպիտակ ու կարմիր տողերով շապիկ մը կը հագնէր և աստեղազարդ բարձր թաղ մը կը դնէր: Անոր պալատին մէջ կային շատ մը գահազուրկ իշխաններ, որոնք պալատականի պաշտօն կը կատարէին: Հազարաւոր բանւորներ բերել տալով իր զրաւած երկիրներէն, շինել տուաւ բազմաթիւ քաղաքներ ու շէնքեր: Տիգրան այդ կերպով մէծ համբաւ մը թողաւց Հայոց պամուշեան մէջ:



ԺԶ. Դ Ա Ս

ՏԻԳՐԱՆ ԵՒ ՀՈՌՎԱՅԱՅԵՑԻՆԵՐԸ

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Միհրդատ և Տիգրան դաշնակցած էին պայմանաւ որ հողը մնայ Միհրդատի, զանԱզգ. Պատմ. Սիջին Ա.

ձերը , Տիգրանին : Անոնց երկուքը գրաւեցին կապազովկիան : Հոսմայեցիները զրկեցին Ախլա զօրալարը , որ յաղթեց Միհրդատի : Այս վերջինը նոր պատրաստութիւններով վերաբերեց ետ առած երկիրները : Լուկուլոս զրկուցաւ Հոսմէն . նախ յաղթուեցաւ , յետոյ յաղթեց Միհրդատի , որ Տիգրանի քով փախաւ . Լուկուլոս Տիգրանի վրայ զնաց . Տիգրան անհոգութեամբ յաղթուեցաւ , բայց ետքը լուկուլոսի զօրքը ցրուեց : Անոր տեղ Դըրկուեցաւ Պամպէս , որ մատնիչ որդիներու շընորհիւ յաղթեց Միհրդատին և բարեկամ եղաւ Տիգրանին : Միհրդատի որդին էր Փառնակ , Տիգրանինը , Փոքր Տիգրան : Միհրդատ անձնառարան եղաւ , Տիգրան՝ բարեկամ Հոսմի :

ՏԻԳՐԱՆ , ՄԻՀՐԴԱՏ ԵՒ ԼՈՒԿՈՒԼՈՍ . — Տիգրանի դաշնակիցը՝ Միհրդատ քաջ և յանգուզն իշխան մըն էր . կիշխէր Սև ծովի հարաւային եղերքները , հիւակուան Տրապիզոնի շուրջը տարածուած երկիրն վրայ : Անոր երկիրը կը կոչուէր Պոնտոս , Սեւ ծովի հին անունովք :

Միհրդատ և Տիգրան դաշնակից եղած էին . առաջ ողական դրին որ գրաւուած երկիրներուն հոգը պատրանի Միհրդատի . իսկ բոլոր զանձերը , հարածութիւնները պատրանին Տիգրանի :

Երկու երկիրներուն բանակները միանալով յարձակեցան Կապազովկիայի վրայ : Կապազովկիան էր զանուէր Կեսարիայի չորրոյ տարածուած զաւառներուն մէջ : Կապազովկիան Հոսմայեցիներու իշխա-

նութեան առակ կը գտնուէր . Տիգրան և Միհրդատ Կապազովկիոյ իշխանը վանաեցին ու գրաւեցին երկիրը : Բոլոր զանձերը , թանկագին քարերով բանուած կուռքերը փոխադրեցին Հայաստան , իսկ հողը պատկանեցաւ Միհրդատի :

Միհրդատ մեծ ծրագիր մը ունէր . նա կ'ուգէր գրաւել հոսմէական այն երկիրները , որոնք իր երկրին մօս կը գանուէին : Նա մտածեց խորտակել Հըսոմէացւոց զօրութիւնը : Կազմակերպեց 300,000 հոգինոց անեղ բանակ մը : Այդ բանակը պաշտպանելու համար պատրաստեց 300 նաւերէ բաղկացած նաւատարմիզ մը : Ան յարձակեցաւ Փոքր Ասիայի վրայ և հասաւ մինչև Բիւբանիա (Խզմիթի կամ Երկումիլիայի գոտառը) : Գրաւեց նաև Յունաստանը և կուսակալ մը դրաւ :

Հոսմայեցիները լուելով որ Կապազովկիան գրաւուերէ , Սիլլա զօրապետը զրկեցին բաղմաթիւ զօրքով : Ան մատու Յունաստան ու ետ առած զայն : Միհրդատ յաղթուեցաւ և սախալուեցաւ 80 նաւ տալ Հոսմայեցիներուն :

Ան սկսաւ նորէն պատրաստութիւններ տեսնել , նոր զօրք ժողվեց ու Տիգրանի հետ նորէն արշաւեցին և գրաւեցին ետ առած երկիրները : Այս անգամ Հոսմայեցիները զրկեցին Լուկուլոս զօրապետը : Լուկուլոս շատ խոնաւթեամբ առաջ քալեց որպէսնեմեւ կը վախնար Տիգրանին :

Լուկուլոս մէկ երկու անգամ կոռւեցաւ Միհրդատի հետ , բայց յաղթուելով ետ քաշուեցաւ : Սակայն ամէնէն ետքը յարձակելով Միհրդատի զինուարներուն վրայ , յաղթեց անոնց : Միհրդատ քիչ մընաց զերի պիտի իյնար , եթէ խորամանկութեամբ Հայաստան չլամաչէր , Տիգրան երես չառ առւ Միհր-

դատի , բայց պահեց զայն :

Լուկուլս ղեռպահներ զրկեց Տիգրանին և նամակ մըն ալ զրելով Միհրդաբը ուղեց : Տիգրան տեսներավ որ նամակին մէջ « Հայոց թագաւոր » ըսուածէ իրեն և ոչ թէ « Արքայից արքայ » , շատ բարկացաւ , նամակը պատուեց և Միհրդաբը չյանձնեց : Այն ժամանակ Լուկուլսու գնաց Տիգրանակերաբը պաշարեց :

Տիգրան առաւ իր զինուորները եւ եկաւ Լու-



կուլոսի վրայ : Տեսնելով Հոռմայեցիներուն քիչ ըլլալը , ըսաւ . « Ո՞վ են ասոնք . եթէ դեսպան եկած են , շատ են , իսկ եթէ պատերազմելու եկած են , քիչ են » : Եւ անհոգ կեցաւ . Լուկուլսու առանց ժամանակ կորանցնելու յարձակեցաւ Տիգրանի վրայ , և անոր բանակը ցրուեց : Յետոյ անմիջապէս գնաց Տիգրանակերաբը պաշարեց : քաղաքը զրաւեց , որովհետեւ մէջի Յոյները յատնութիւն ըրին :

Տիգրան շուտով նոր զօրք ժողվեց , կանոնաւորեց և Լուկուլոսի դէմ ելաւ : Լուկուլսու յաղթուեցաւ : X

Տիգրան ՊԱՐՏՈՒԱԾ եի ԴԱՇՆԱԿԻՑ ՀՈՌՄԻ . — Հոռմայեցիները Լուկուլսուն տեղ երիտասարդ զօրապետ մը զրկեցին մեծ բանակով . այդ զօրապետին անունն էր Պոմպեո :

Տիգրան և Միհրդատ այս անդամ ալ անպատճառ կը յաղթէին , եթէ իրենց տղաքը չղաւածանէին :

Միհրդատ ունէր Փառնակ անուն տղայ մը , որ ուզելով հօրը տեղ թագաւոր ըլլալ , մատնութիւն ըրաւ . Պոմպէոսի զինուորները իր հօրը դէմ առաջնորդեց : Այդ պատճառով պատերազմի միջոցին Միհրդատ յաղթուեցաւ և ընդդիմ մը մէջ պաշարուեցաւ : Գերի չիյնալու համար թոյն առաւ խմեց , ուզելով անձնառողան ըլլալ : Սակայն թոյնը չագեց , որովհետեւ Միհրդատ ինքզինքը վարժեցուցած էր թոյնի : Այն ատեն իր սուրովը ինքզինքն սպաննեց :

Տիգրան ալ փոքր որդի մ'ունէր , որուն անունն էր Տիգրան : Այս փոքր Տիգրանն ալ ուզելով իր հօրը տեղ թագաւոր ըլլալ , մատնեց իր հայրը և թըշնամի զինուորները առաջնորդեց իր հօրը բանակին դէմ : Տիգրան տեսնելով որ լաւ պիտի չըլլայ իր երկրին , բարեկամացաւ և դաշինք կնքեց Հոռմայեցիներուն հետ . Պոմպէոս բարեկամ եղաւ Տիգրանի հետ :

Փոքր կամ Կրտսերն Տիգրանը տեսնելով որ իւրեն արուած խոստումը չեն յարգեր, բարկացաւ Պոմպէոսի դէմ։ բայց Պոմպէոս պատմեց զայն և զղթայի զարմելով իրեն հետք տարաւ։

Տիգրան մեծ պատիւներ տուաւ Պոմպէոսին և մեծ քանակութեամբ դրամ բաշխեց հոսմայեցի զինուուրներուն։ Տիգրան խօսք տուաւ նաև անզամ մըն ալ հոսմէական երկիրները չարշաւել, բարեկամ ըլլալ և միասին պաշտպանել այդ երկիրները արտաքին թշնամիներուն դէմ։

Տիգրան քիչ մը ժամանակ ալ հանդիսաւ ու խաղաղ կառավարեց իր երկիրը և մեռաւ խոր ծերութեան մէջ։



ԺԵ. Դ Ա Յ

ԱՐՏԱԻԱԶԴ Ա.

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Արտաւազդ Ա. իր հօրը Տիգրանի օրով, անոր օգնականն ու աջ բազուկը եղած էր։ Տիգրանի մահէն յետոյ յաջորդեց իր հօրը։

Այդ ատենները Հռոմի մէջ կաղմուեցաւ եռապետութիւն մը, այսինքն երեք անձերէ բաղկացած իշխանութեան գլուխ անցան երեք զօրապետներ։ Այդ զօրապետներն էին ա)Յուլիոս Կեսար, բ)Պոմպէոս, Կրտսեր։ Կրտսոս Պարթեներուն դէմ եկաւ։ Արտաւազդի

Խորհուրդներուն կարեորութիւն չտուաւ։ Պարթեները թէ Հայաստանի և թէ Կրտսոսի դէմ զինուոր զրկեցին։ Արտաւազդ ստիպուեցաւ բարեկամանալ Պարթեներուն հետ և իր քոյրը ամուսնացնել Պարթեներու թագաւորին տղուն Բակուրի հետ։ Կրտսոս չարաչար յաղթուեցաւ։ անոր զլուխը կտրեցին և Բակուրի հարանիքին նուէր զր եցին։ Յուլիոս Կեսար նոր բանակով եկաւ և Կրտսոսի վրէժը լուծեց։

Այնուհետեւ Հռոմի մէջ կաղմուեցաւ երկրորդ եռապետութիւն մը, որուն մէկ անգամն էր Անտոնիոս, որ Պարթեներէն յաղթուեցաւ, ուրովհետեւ Արտաւազդի խորհուրդներուն մտիկ չըրաւ։ Անտոնիոս խարդախութեամբ զերի բռնեց Արտաւազդը և տարաւ եգիպտոս, ուր գլխատեց զայն։ Անտոնիոս ինքն ալ իր պատիժը կրեց։ յաղթուեցաւ Օգոստոս Կայորէն և անձնատպան եղաւ։ Օգոստոս Արտաւազդի տղաքը տարաւ Հռոմ։

ՀՅՈՒՄԻ ԱՅԱԶԴԻՆ ԵՅԱԳԵՑՈՒԹԻՒՆԻ. — Հռոմի մէջ ծերակայտ մը կար որ կը կառավարէր երկիրը, Տիգրանի ժամանակ, Ծերակոյաբն հաւանութեամբ իշխանութեան գլուխ անցան երեք զօրապետներ։ Այդ զօրապետներն էին ա)Յուլիոս Կեսար, բ)Պոմպէոս, կըսու և գ)Կրտսոս։

Այս երեքը իրենց մէջը բաժնեցին երկիրները։ Յուլիոսի ինկաւ Եւրոպական մասը, Պոմպէոսին ինչկաւ եգիպտասը, իսկ Կրտսոսի՝ Ասիական մասը։ Կրտսոս չափ ագահ և ընչափաղց մարդ մը ըլ-

լալով , եկաւ արևելք . գնաց երռւսաղէմ , յտաւ տաշարին մէջ և կողոպտեց բոլոր գանձերը : Յետոյ անցաւ Սիւրիա (Ասորիք) , միշտ գանձերը իւրացնելով :

ԱՐՏԱԿԱՆ Ա. Ե. ԵԼ ԿՐԱՍՈՒ . — Այդ ժամանակ Տիգրան մեռած էր և անոր տեղ թագաւոր եղած էր Արտավազդ :

Արտաւազդ կրթուած , լեզուագէտ և խելացի թաւաւր մըն էր : Ան լաւ գիտէր յունարէն լեզուն : Երբ որ գահը բարձրացաւ , իր հօրը նման ստիպուեցաւ բարեկամ ըլլալ Հոռմայեցիներուն , յարգել իր հօրը գաշինքը Պոմպէսսի հետ :

Արտաւազդ երբ լսեց թէ Կրասոս արևելք եկած է և պիտի պատերազմի Պարթեներուն դէմ , անոր քով գնաց և խելացի խորհուրդներ տուաւ անոր . ստկայն Կրասոս կարեւորութիւն չտուաւ :

Պարթեները երբ իւմացան թէ Կրասոս իւրենց վրայ կուզայ եւ Արտաւազդն ալ անոր պիտի օդնէ , պատրաստուեցան . երկու բանակ կազմեցին . մէկը դրկեցին Հայաստան՝ Արտաւազդի վրայ , իսկ միւսը Կրասոսի դէմ :

Արտաւազդ նորէն խորհուրդ տուաւ , պատգամաւորի միջոցաւ Կրասոսին , որ Հայաստան գայ , մէկտեղ կոուելու համար . Կրասոս դարձեալ կարեւորութիւն չտուաւ : Այն տաեն Արտաւազդ հաշուաթիւն ըրաւ Պարթեներուն հետ և իր մէկ քոյլը կընութեան տուաւ Պարթեներուն թագաւորի տղուն՝ Բակուրի . սկսան հարսնիք բռնել :

Այդ միջոցին Պարթեներու միւս բանակը , ուրուն զօրապեան էր Սուրեն իշխանը , յարձակեցաւ Հըսոմէական զինուարներուն վրայ , զախչախեց զանոնք և Կրասոսի աղուն գլուխը կարեց նետեց Կրասոսին առջև : Հօրը գլուխն ալ կարելով , Սուրէն դրկեց Հայաստան , Բակուրի հարսնիքին իբրև նուրբ :

Պամպէսս եւ Յուլիոս իրարու հակառակորդ էին եւ կուզէին առանձին իշխուլ . այդ պատճառով կըռուեցան իրարու հետ : Երբ Պոմպէսս մեռաւ , իշխանութեան զլուխ անցաւ Յուլիոս կեսար : Ան ուզելով Կրասոսի վրէմը լուծել , եկաւ արեւելք՝ Պարթեներուն դէմ : Սոսկալի ճակատամարտի մը մէջ յաղթեց անոնց . ետ առաւ հոռմէական արծուենչան զրօշները եւ Հոռմ զրկեց : Կարծ լուր մըն ալ զրկեց հոն՝ ըսկելով . « Եկայ , աեսայ , յաղթեցի » . (վէճի , վիտի , վիչի) :

ՀՅՈՒՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԵԽԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ , ԱՆՏՈՆԻՈՍ ԵՒ ԱՐՏԱԿԱՆ ԶԴ . — Յուլիոս կեսար մինակ կառավարեց երկիրները , բայց քանի մը տարի ետքը անսպաննուեցաւ : Այդ եռապետները իրենց մէջ բաժնած էին երկիրները . Անտոնիոսի ինկած էր Յունաստանը եւ Արեւելքը :

Անտոնիոս Եգիպտասսի Կղէսպարա թագուհին իրեն կին ըրաւ և անոր ձեռքը խաղալիկ եղաւ : Անտոնիոս Ասիա գալով , ուզեց Պարթեներուն դէմ քալել : Արտաւազդ ստիպուած էր զօրք տալ . բայց բարեկամ ըլլալով Պարթեներուն , չէր ուզեր կըռուիլ : Երբ Անտոնիոս կարեւորութիւն չտուաւ Արտաւազդի տուած խորհուրդներուն , Արտաւազդ չուզեց օդնել անոր :

Պարթեները ինկան Անտոնիոսի բանակին վրայ և սոսկալի վնաս պատճառեցին : Անտոնիոս պարտութեան պատճառը Արտաւազդը կը համարէր , ուստի դարձաւ Եգիպտասս և ուզեց վրէժ լուծել :

Նախ խորամանկ միջոցներով Արտաւազդն իր քով հրաւերեց , բայց ան չդնաց . այն ժամանակ Անտոնիոս զօրքով լուաւ Հայաստան : Հաւատացուց թէ Արտաւազդի բան մը պիտի չընէ , այլ եկած է տուրք գանձելու : Արտաւազդ հաւատալով զնաց անոր բա-

նակը: Անտոնիոս վատարար արծաթէ շղթաներով կապեց զայն եւ Հայաստանի գանձերը կողոպտելէն ետքը, զայն ալ ընտանիքով Եղիպատոս ատրաւ:

Երբ որ Հռոմի մէջ իմացան Արտաւազդը խարելով գերի բռնելը, շատ մեծ անպատճռութիւն ունեցին: Եռապետներէն մէկն էր Հռիտաւիանոս կամ Օգոստոս, որ թշնամացաւ Անտոնիոսին. յարծակեցաւ անոր վրայ: Անտոնիոս իմանալով որ Օգոստոսը ըստաէն պիտի աղասէ Արտաւազդը և պիտի վերադնէ Հայաստան, քիչ մը ժամանակ բանար պահեց, և օր մըն ալ երբ Արտաւազդ չխոնարհեցաւ Կղէպատրայի առջև և զայն «թագուհիներու թագուհի» չկոչեց, սպաննեց:

Անտոնիոս և Կղէպատրա, յաղթուելով Օգոստոսին, անձնասպան եղան: Օգոստոս Արտաւազդի որդիները առաւ և Հռոմ տարաւ, հոռմէական կը թութիւն տալու համար:



ԺԲ · Գ Ա Ս



ԱՐՇԱՄ ԵՒ ԱԲԳԱՐ

Ա Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Արտաւազդի մահէն ետք, Մծրինի մէջ թագաւոր կը պատկանի Արշամ, որ արտաւազդին կամ գանձին առաջական էր:

Աերունդէն էր: Ան կ'ստիպուի հպատակիւ եւ տուրք տալ Հռոմայեցւոց: Պաղեստինի Հերովդէս թագաւորին հետ կը գժափի, չտալով անոր ուղած գործաւորները, բայց բռնի ուժին առջև կը խոնարհի: Իրեն կը յաջորդէ Արքայ, որ նոյնպէս կը գժափի Հերովդէսի հետ և կը խորհի ապատամբիւ, բայց չյաջողիր: Կը չինէ Եղեսիան, ուր կը փոխադրէ իր աթոռը: Յիսուսի հետ յարաբերութեան կը մտնէ և թագէսուն կը մկրտուի: Նամակներ կը զրէ Տիրերիոսի և ուրիշներու, բայց պատասխան չտած կը մեռնի:

(ԱԻԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԻՒՆ)

ԱՐՃԱՄ ԵՒ ՀՌՈՄԱՅԵՑԵՑԻՆԵՐԸ . — Արտաւազդի գերի տարուելէն և մեռնելէն ետքը, հայ իշխանները միանալով Մծրինի մէջ իրենց թագաւոր դրին Արշամ անունով մէկը, որ Տիգրանի եղբօրորդին էր: Արշամ ուզեց բոլորովին աղաս ըլլաւ, բայց ստիպուեցաւ Հռոմայեցիներու զանակից ըլլաւ և տուրք տալ: Անոր օրով Հայերը առաջին անգամ հարկատու եղան Հռոմայեցիներու:

Արշամի օրով Երուսաղէմի մէջ թագաւոր էր Հերովդէս, որ Բեթղեհէմի մահուկներն սպաննողն է: Հերովդէս բարեկամ էր Հռոմայեցիներուն: Ան շատ մը չէնքեր շինել տուաւ . ուզեց սալայատակել նաև Ասորիքի Անտիոք քաղաքը, որուն փողոցները տիղմավ լիցուն էին: Ասոր համար Արշամէն գործուորներ ուզեց, բայց ան չտուաւ:

Հերովդէս բարկացաւ եւ զօրք մողվելով Արշամի վրայ զնաց: Արշամ ստիպուեցաւ անոր խնդիրը

կատարել։ Արշամ 20 տարի թագաւորեց և մեռաւ,
Աբգար Եի իր ԳՈՐԾԵՐԸ . — Անոր յաջորդեց
իր որդին Աբգար։ Ասոր օրով Օգոստոս կայսրը մար-
դիկ դրկեց Հայաստան, որ աշխարհագիր ընեն, բը-
նակիչներուն անուններն արձանագրեն, առւրք առ-
նելու համար։ Օգոստոս կայսրը զրկած էր նաեւ իր
պատկերը, մեհեանին մէջ կախուելու համար։

Հերովդէս թագաւորն ալ իր պատկերը դրկեց
Աբգարին միասին կախուելու համար։ Բայց Աբգար
մերժեց։ Հոռմ մարդ դրկեց, որ ինքինքն արդա-
րացնէ Հերովդէսին դէմ։ սակայն կարեւորութիւն
չտրուեցաւ։ Այն ատեն Աբգար ստիպուեցաւ գլուխ
Ճռել։



Աբգար թագաւոր

Աբգար միտքը դրաւ Հոռմայեցիներուն դէմ
ապստամբիլ, ասոր համար իր աթոռը Մծրինէն
փոխաղբեց Եղեսիա (Ուրֆա) քաղաքը և գորացուց։

Անկէ ետքը ուղեց ղաշնակից ըլլալ Պարթևնե-
րուն, բայց որովհետև այն ժամանակ Պարթևնաց թա-
գաւորը մեռեր էր և անոր երեք որդիները իրարու-
նետ կը կոռւէին թագաւոր ըլլալու համար, սարպ-
ուեցաւ Պարսկաստան երթալ և զանանք հաշտեցնել։
Երեք եղբայրները հաշտուեցան, բայց չկրցան օդնել
Աբգարի։

Աբգարի ճամբարդութիւնը իմանալով Հոռմա-
յեցիները կակածեցան։ ուստի Աբգար ղետպաններ
դրկեց Երուսաղէմի մօսերը զանուող հոռմայեցի կու-
սակալին և համոզեց թէ Պարթևներուն հետ ղաշ-
նակից եղած չէ։

Անոր ղետպանները ճամբան, Երուսաղէմի մէջ
հանդիպեցան Յիսուսի, որ քարոզութիւններ կ'ընէր։
Անոնք եկան իրենց աիրոջը պատմեցին։ Աբգար հի-
ւանդ էր, բորբոսութեան բռնուած էր։ Անոր համար
իր երկիրը հրաւիրեց Յիսուս, որ չի զնաց, խռո-
տանալով իր համբարձումէն ետք իր աշակերտնե-
րէն մէկը զրկել։

Իրօք թաղէոս առաքեալը եկաւ Եղեսիա բժըշկեց։
Աբգարը, մկրտեց զայն իր պալատականներուն հետ։
Ամբողջ Եղեսիան քրիստոնեայ եղաւ։ Ադրէ անու-
նով խոյրարը (թագ շինող) իրեն սեղ եպիսկո-
պոս ձեռնաղբելով, թաղէոս գնաց վերին Հայաստան։

Աբգար անկէ ետքը սկսաւ նամակներ գրել Տի-
բերիոս կայսեր, Պարսից և Սասպեսանի թագաւոր-
ներուն։ Տիբերիոսին գրեց որ Պիղատոսը պատէ-
խկ միւսները յորդորեց որ քրիստոնէութիւն ըն-
դունին։ Բայց ղեռ պատասխան չառած մեռաւ։

X

ԺԹ. Դ. Ա

ԱՆԱՆՈՒՆ, ՍԱՆԱՏՐՈՒԿԵՒԻ ԵՐՈՒԱՆԴ

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Արգարի յաջորդեց Անանուն, որ ուրացաւ քրիստոնէութիւնը և հալածեց քրիստոնեաները. սպաննեց Արքէ խոյրաբարը: Ինք տև սիւնի մը տակ մնաց և մեռաւ:

Անանունէն ետք Հայաստանի թագաւոր եղաւ Սանատրուկ հայկազն: Ան քրիստոնէութեան դէմ հալածիչ մը եղաւ. նահատակեց թագէուսը և Սանիբուխ կոյսը. Արգարի սերունդը սրէ անցաւ: Սանատրուկ որսի ժամանակ նետէ մը սպաննուեցաւ:

Սանատրուկի յաջորդեց Երուանդ, որ մօրը կողմէն հայ թագաւորական սերունդէն էր: Երուանդ որէ անցաւ Սանատրուկի սերունդը. աշզատեցաւ միայն Արտավազ, որ փախցուեցաւ իր մէկ պաշտպանին միջոցաւ: Երուանդ շինեց Երուանդաւոր, Երուանդակերը, Բագրանիը և Ծննդոց Անսառը:

(Ա.Ի.Ա.Դ.Ա.Կ.Ա. ՊԱ.ՏՄ.ՈՒ.Ի.Թ.Ի.Ի.Ն.)

ԱՆԱՆՈՒՆ եւ ՍԱՆԱՏՐՈՒԿ. — Արգարի մեռնէն եաբը Եղեսչայի մէջ թագաւոր եղաւ անոր որդին Անանուն: Իսկ հայ թագաւորական սերունդէն Սանատրուկ անուն մէկը թագաւոր եղաւ Հայաստա-

նի վերին մասերուն վրայ:

Անանուն քրիստոնէութիւնն ուրացաւ և ոկոսւ քրիստոնեաները հալածել: Նահատակեց Աղդէ խոյրաբարը, որ չէր ուզած թաղ շինել Քրիստոսի չհաւատացող անարժան զլուխին:

Սանատրուկ թագէսս առաքեալէն քրիստոնէայ եղած և մկրտուած էր. անոր Սանդուխտ կոյսն ու հաւատացած էր: Բայց Սանատրուկ, նախարարներու



Հայկական կիճ դրամներ

թելադրութիւնովը , ուրացաւ քրիստոնէութիւնը և ինքն ալ սկսաւ Անանունի պէս հալածել քրիստոնեաները . Ս. Թաղէոս առաքեալը և Սանդուխտ կոյսը նահատակել տուաւ , ինչպէս նաեւ ուրիշ շատեր :

Ապա զօրք ժողվեց որ երթայ Անանունը Միջազգետքէն հալածէ և անոր երկիրն ալ գրաւէ : Երբ Սանատրուկ պատրաստութեան մէջ էր , Անանուն իր պալատը նորոգած տաեն , սիւնի մը տակ մնալով մեռաւ : Եղեսիացիները դեսպան զրկեցին Սանատրուկի , խոստացան քաղաքը եւ գանձերը յանձնել :

Սանատրուկ Եղեսիա յանելով Արքարի սերունդը , բացի աղջիկներէն , սուրէ անցնել տուաւ : Իսկ Արքարի կինը Հեղինէն , որ Խառանցի էր , իր հայրենիքը զրկեց : Հեղինէ Երուապէմ զնաց ուր շատ բարիք ըրաւ կարօտեալներուն և հօն թաղուեցաւ :

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ . — Սանատրուկի ժամանակ նշանաւոր էր Երուանդ անուն իշխանը , որ մօրը կողմէն հայ թագաւորական սէրունդէն էր եւ Սանատրուկի սիրելի :


Երուանդ Հայաստանի հիւսիսային գաւառներու կուսակալ էր եւ բոլոր նախարարներուն սիրելի ըլլալ կ'աշխատէր : Երբ Սանատրուկ որսի ժամանակ նետով մը սպաննուեցաւ , յաջողեցաւ Հայոց թագաւոր ըլլալ . բայց Բագրատունի նախարարը յանձն չառաւ անոր զլուխը թագ դնել :

Ասոր համար Երուանդ սուրէ անցուց Սանատրուկի բոլոր սերունդը . միայն Արտաշէս անուն մասուկ յը իր սանտուին ձեռամբ ազատուեցաւ :

Սմբատ Բագրատունի իմանալով Արտաշէսի ազատուիլը , լեռներուն մէջ գնաց գտաւ զայն եւ փախցուց : Պարթեւներու թագաւորը սիրով ընդունեց զայն :

Երուանդ աշխատեցաւ Արտաշէսը վարկարեկ ընկել . Պարթեւներու թագաւորին զրեց թէ Արտաշէս Սանատրուկի որդին չէ , այլ Մարտառանցի հովիւի մը տղան : Սմբատին ալ խոստամուներ ըրաւ , բայց չի յաջողեցաւ :

Ապա իր իշխանութիւնը ապահովելու համար , բարեկամ եղաւ Հոռմայեցիներուն հետ , անոնց տաւ լով Միջազգեաքը . իսկ իր մայրաքաղաքը Արմաւիրէն փոխադրեց Երասխ գետին մօտ շինած իր նոր քաղաքը , որ կոչուեցաւ Երուանդաշատ : Քաղաքը ամուր կերպով շինեց Երասխի հիւսիսային կողմը և Ախուրեան գետին արեւելեան կողմը :



Երուանդաշատ

Երուանդաշատէն դէպ ի հիւսիս , Ախուրեանի եղերքը շինեց Բագրատի քաղաքը , ու ասառածներու արձանները հոն փոխադրեց : Քուրմերը իր կողմը շահելու համար իր Երուազ եղրայրը քրմապետ կարգեց : Շինեց նաև Երուանդակերտ քաղաքը ուր որսի անտառ . մըն ալ անկել տուաւ , որ կոչուեցաւ Ծենդոյ անտառ :

Ազգ . Պատմ . Միջին Ա.

Առատաձեռնութիւններով, խնջոյքներով ան
չկրցաւ իր կողմը շահիւ լուսոր նախարարները:

ԱՐՃԱԿՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԹԵՒՆԵՐԸ ԵՒ ՎԱՂԱՐՇԱԿ —ՏՐԴԱՏ

(ԷՆԹԵՐՑՈՒՄ)

Հայկական աւանդական պատմութեան մէջ նշանաւոր եղած Վաղարշակ Արշակունին եւ Արտաշէս նոյն անձին անուններն են, ուստի իբրև ընթեցաւ կը դնենք նոս Վաղարշակի աւանդական պատմութիւնը:

Հայաստանի արեւելեան կողմը, կասպից ծովին հարաւային և արեւելեան եզերքներուն վրայ ժողովուր մը կը բնակէր: Այդ ժողովուրով կը կոչուէր Պարքեւ:

Ի՞ ըսեն թէ Պարթեւները նախապէս այդ երկիրը չէին բնակէր: անոնք կ'ապրէին Միջին Ասիայի մէջ՝ երբ բարբարսս ժողովուրդներ յարձակեցան իրենց վըսայ, թողուցին իրենց հայրենիքը և եկան բնակեցան կասպից ծովին հարաւային կողմէրը: Իրենց երկրէն աքսորուած ըլլալնուն համար ալ կոչուեցան Պարքեւներ, որովհետեւ Պարքեւ ախորական կը նըշանակէ:

Պարթեւները թափառական ժողովուրդ մըն էին: Անոնք լաւ ձի հեծնել գիտէին և կրնային աղեղ

նետել թէ առջեւէն և թէ կոնակի կողմէն: Երբոք պատերազմէին ու յաղթուէին ետ կը դառնային, բայց ետ դարձած ատենն ալ չէին դաղրեր նետեր նետելէ:

Անոնք աննշան ազգ մըն էին առաջ, հպատակեցան Մարաց, Պարսից և Մեծն Աղեքսանդրի: Սելեւկոսի ժամանակ անոր իշխանութեան տակ ինկան:



Վաղարշակ —Տրդատ —
Արտաշէսի արձանը

Բայց ձանձրանալով սելեւկեան իշխանութենէն, ուզեցին ապատամբիլ ու ազատ ըլլալ:

Անոնց մէջ նշանաւոր իշխան մը կար: այդ իշխանին անունն էր Արշակ:

Արշակ իմելացի և քաջ ըլլալով, իրեն ազգը ոտք հանեց, զինուորները կրթեց, կանոնաւորեց և ապօտամբեցաւ. եղաւ Պարթեւներուն աչքառու թաղաւորը. պատերազմեցաւ դրացի ազգերուն դէմ և յաղթեց անոնց:

Պարթեւները կրօնքով և լեզուավ նման էին թէ
Պարսիկներուն և թէ Հայերուն:

Սահմարուկի մահէն ետքը Հայերը շատ խառնակ
վիճակի մէջ էին: Մեծն Տիգրանի յաջորդները քաջ,
խելացի չէին, այլ՝ թոյլ մարդեր: Այդ պատճառով
Հայերը շատ դժգոհ մնալով և տեսնելով Պարթեւներ
ոգրութիւնը, փափաքեցան որ Պարթեւ թագաւոր
մը ունենան իրենց վրայ:

Պարթեւներուն Վաղարշ — Արշակ թագոսորը
ունէր եղբայր մը, որուն անունն էր Վաղարշակ
կամ Տրդատ: Արշակ իր եղբայրը փառաւոր կերպով
Հայոց թագաւոր պատճեց և զօրք տալով դրկեց Հայ
յաստան:

Անոր ըստու. «Սահմանք քաջաց զէնն իւրեանց»
Քաջերու սահմանը իրենց զէննն է, այսինքն քաջերը
որքան զօրաւոր ըլլան, իրենց զէնքով շատ երկիր-
ներ կը զրաւեն և իրենց երկրին սահմանները կ'ըն-
դարձակեն:

Վաղարշակ Հայաստան գալով սիրով ընդունա-
ռեցաւ: Մեծ Հայքը, Կասպից ծովէն մինչեւ կով-
կասի լեռները, Սեւ ծով, իրեն հնազանդեցան: Բայց
Փոքր Ասիայի բնակիչները, որոնք Սելեւկեան իշ-
խանութեան տակ կը գանուէին, չուզեցին խոնար-
հիլ Վաղարշակի առջեւ: Մորփիւդիկն անուն Կապա-
դոկիացի իշխանին առաջնորդութեամբ պատերազ-
մեցան Վաղարշակի դէմ: Բայց Պարթեւ և հայ քա-
ջերը յարձակեցան ու սպաննեցին Մորփիւդիկնը և
տնոր զօրքն ալ ցրուեցին ու ջարդեցին:

Այնուհեաւ Վաղարշակ աշխատեցաւ Հայաստա-
նը բարեկարգել: Ուզեց հասկան թէ իրմէն առաջ
որոնք իշխած են Հայաստանի վրայ: Հայոց պատ-
ճութիւնը կորսուած էր:

Ուստի Մար Արաս անուն գիտնական մարդ մը,

իր եղբօրը Արշակին դրկեց, նամակ մըն ալ տուաւ
և խնդրեց որ թոյլ տար Նինուէի մատենադարանին
մէջ Հայոց պատճութիւնը գտնելու:

Մար Արաս զնաց Նինուէ: Արշակ թագաւորը
ոիրով ընդունեց և հրամայեց որ անոր առջեւ մատե-
նադարանները լանան: Մար Արաս շատ փնտոեց և
վերջապէս զաւ Հայոց աւանդական պատճութիւնը,
Հայկի, Արայի եւայլն պատճութիւնը, և ըերտ
Վաղարշակին, որ ուրախացաւ և հրամայեց Հայոց
պատճութիւնը քարերու վրայ փորազրել, որ ամէն
մարդ տեսնայ ու կարզայ:

Վաղարշակ ուրիշ բարեկարգութիւններ ալ ը-
րաւ: Ան զրաւ ազուսր օրէնքներ ու կարգեր: Իր
աթոռը հաստատեց Մծբին: Հայաստանի սահմանազե-
լուխներուն վրայ չորս իշխաններ՝ բնիշխներ կար-
գեց: Բաղրատանի Բագրատան իշխանին տուաւ Ար-
շակունի թագաւորները պասկելու իշխանութիւնը
և կոչեց «Թագաղիք—Ասպետ»: Արծրունի նախա-
րարներուն տուաւ թագաւորին առջեւէն արծուէնը-
շան զրօնները տանելու իրաւունքը, Վարաժնունի
նախարարները կարգեց որուերու վերակացու: Իր
պալատի կիններուն պահպանութիւնը յանձնեց ներ-
քիններու, որոնց զլաւիը կը կոչուէր Հայր մարդ-
պետ, որ Հայկալանց սերունդէն էր: Քրմութիւնն
ալ յանձնեց Վահագնի սերունդին, որոնք կոչուած
էին Վահունիք:

Կանոնաւորեց նաեւ զինուորները և ուրիշ լաւ
օրէնքներ զրաւ զողերու, յափշտակազներու և մար-
դապաններու դէմ:

Վաղարշակ իր պալատին մէջ ունէր երկու յու-
շարար պաշտօնեայ: մէկը ամէն օր պիտի յիշեցնէր
բարի զործերը, իսկ միւսը՝ պատիմները:

Որոշեց նաև որ թագաւորին անդրանիկ աղան

գահաժառանգ ըլլայ և թագաւորին քով մնայ, իսկ
միւս աղաքները երթան ուրիշ տեղ բնակին: Ուստի
Արշակ, անդրանիկ որդին, և Արտաշես թոռը իր մօտ
պահեց, իսկ միւսները Հաշտեանի գաւառը զրկեց, առ
նոնց ստացուածք ու հող տալով: Հաշտեանք կը գըտա-
նուէր Վանայ ծովին արեւմտեան կողմը, Չորրորդ
Հայքի մէջ:

Այսպիսի բարեկարգութիւններ ընելէ ետք Վա-
ղարշակ մեռու:



Ի . Դ Ա Ս

Մ Ա Ր Տ Ա Շ Է Լ Ս Բ . Ե Կ Ա Ր Տ Ա Խ Ա Զ Գ Բ . Բ .

Ա Մ Փ Ա Փ Ո Ւ Մ

Արտաշէս Պարթևներուն օգնութեամբ կու-
դայ Հայաստան և կոռուելով կը յաղթէ Եր-
ուանդի, որովհետեւ Արգամ և ուրիշ նախա-
րարներ իրեն կողմը կ'անցնին: Թագաւոր ըլ-
լալէ ետք իր Երախտազիտական պարաքը կը
կատարէ: Հռոմայիցիները Հայաստան կուզան,
Արտաշէս կը ստիպուի տուրք վճարել: Ալան-
ները կ'արշաւեն Հայոց վրայ, կը յաղթուին
կուրի մօտ: Սաթենիկի հետ կ'ամուսնանայ:
Դարձեալ կ'ուզէ Հռոմայիցիներէն ապստամ-

բիւ, բայց չի յաջողիր: Կը մեռնի ու կը թագ-
ուի փառաւոր հանդէսով: Անոր կը յաջորդէ
Արտաւազդ Բ., որ զիհն կը զլորի իր ձիով:
(ԱԻԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ԵՐՈՒԱՆԴ ԵԿ ԱՐՏԱՇԵԼՍ — . Մինչդեռ Եր-
ուանդ կ'աշխատէր իր զաւը ամրացնել Արտաշէս և
Ամրատ Բագրատունի սիրելի ըլլալով Պարթևներու-
թագաւորին, օգնութիւն ստացան ու մեծ բանակով
եկան Հայաստան:

Երուանդ իմացաւ և սկսաւ պատրաստութիւն-
ներ ակսնել. Երկու բանակները իրարու ձականե-
ցան Երուանդաշատէն հիւսիս, Ախուրեան զետին
մօտ: Հայ նախարարներ Արտաշէսի կողմն անցան



Արտաշէս Բ.

և սկսան Երուանդի զէմ կոռուիլ: Պատերարմը սոս-
կալի եղաւ:

Մուրացան Արգամ նախարարը, որ չատ զօրք

ունէր և քաջ էր՝ Երուանդի կողմն էր։ Արտաշէս
մարդ զրկեց անոր զազանի և խոստացաւ իր երկը
բորդն ընել, եթէ իր կողմը անցնի։ Արգամ ընդու-
նեց և հեռացաւ Երուանդէն։

Երուանդ մնաց միայն վրացի զօրքերով . որտե՞
զիմացան ու փախան։ Կոռի մէջ մէկ քանի քա-
ջեր, որտե՞ք Երուանդի խօսք տուած էին Արտաշէսը
սպաննել, յարձակեցան ու քիչ մնաց որ Արտաշէս
մեռնէր։ Արտաշէսի սանառուի որդին՝ Գիսակ անոնց
զէն ելաւ և ազատեց իր տէրը, բայց սուրէ մը
իր զէմքին կէոր կարուեցաւ ու մեռաւ։

Երուանդ ստիպուեցաւ փախչիլ։ Սմբատ հալտ-
ծեց զայն և սպաննեց։ Արտաշէս հրաման ըրաւ որ
պատուեն Երուանդի զիտկը, արձան մը կանգնեն ա-
նոր վրայ, որովհետեւ մօրը կողմէն արքայական
գերդաստանէն էր։

Սմբատ Երուանդի զանձարանէն գտաւ Սանատ-
րուկի թագը և փառաւոր կերպով պսակեց Արտաշէ-
սը։ Ան թագաւոր ըլլալէն ետքը իր խոստումը կա-
տարելով իրեն երկրորդ ըրաւ Արգամ իշխանը և ի-
րաւունք տուաւ յակնիթակալ պսակ դնել, ականջնե-
րուն ող եւ մէկ սուքին կարմիր կօշիկ, սոկի դզու-
պատառաքաղ եւ բաժակ զործածել։ Սմբատին ար-
ուաւ թագալրութեան իրաւունքը եւ կարգեց սպա-
րապետ։ Գիսակի Ներսէս աղան նախարարներու
կարգը դասեց և կոչեց Գիմահիւն նախարարութիւն։

Հոռմայեցիները զօրքով յարձակեցան Հայաս-
տան, իրենց առուրքը պահանջելու համար։ Արտաշէս
ստիպուեցաւ հայառուիլ եւ մեծ պատիւներու արժա-
նացաւ։

Քիչ յետոյ Կովկասէն բարբարոս ժողովուրդ մը
յարձակեցաւ Հայաստան. այդ ժողովուրդը կը կոչուէր
Ալաններ։ Անոնց հետ ուրիշ վայրենի ցեղեր ալ միա-

ցած էին։ Արտաշէս անմիջապէս հաւաքեց իր զին-
ուորները և Կուր գետին եղերքը անոնց զէմն ելաւ
ու քաջարար կոռուեցաւ։ Ալանները յաղթուեցան,
զետին միւս կողմը փախան, անոնց արքայորդին ալ
զերի ինկաւ Հայոց ձեռքը։ Ալաններու թագաւորնու-
զեց հաշտուիլ, բայց Արտաշէս յանձն չառաւ։

Այն առեն Ալաններու թագաւորին աղջիկը
Սարենիկ զետին ափը եկաւ և հեռուէն համոզեց Ար-



Սարենիկ եւ Արտաշէս

աշէսը որ իր եղբայրն ազատէ։ Արտաշէս Սաթենի-
կի իմաստուն խօսքերէն հրապուրուելով հաշտուե-
ցաւ եւ Սաթենիկն ալ իրեն կին առաւ . փառաւոր
հարսանիք մը կատարուեցաւ, ուր փեսային ու հար-
սին վրայ մարգարիտ ու սոկի կը թափէին։

Հայ զուսանները այսուէս կը նկարազրէին ու
կ'երգէին Արտաշէսի և Սաթենիկի հարսնիքը։

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտա-

Հիսի,
Տեղայր մարդարիտ ի հարսնութեանն Սաթին-
կան: »



Ս Ա Թ Ի Ն Ի Կ

Արտաշէս անկէ յետոյ սկսաւ չենցնել երկիրը
և ուրիշ երկիրներէ գաղթականներ բերել առւաւ,
բնակեցուց Հայաստան: Հիմէն նորոգեց Արտաշատը
և շինեց կամուրջներ, մեհեաններ, պալատներ եւ
ճամբաններ: Անոր օրով Հայաստանի մէջ չկար ափ
մը հող որ մշակուած չըլլար: այդ պատճառով շատ
սիրուած էր ան ժաղավարդէն:

Ան ունեցաւ բազմաթիւ որդիներ, Սաթենիկէն
առջիններէ աղայ մը ունեցաւ, որուն անունն էր Ար-
տաւազդ, որ չար մէկն էր: Արտաւազդ նախանձելով
Արդամի եւ Սմբատ Բաղրատունիի վրայ, քառութիւ-

նով ու զրպարտութիւնով անոնց ձեռքէն առաւ իշ-
խանութեան իրաւունքն ու երկիրները: Արտաշէսի
միւս աղաքն ալ իրենց եղբօրը վրայ նախանձեցան.
և սկսոն կոռուիլ: Արտաշէս մեծ դժուարութիւն քա-
շեց, զանոնք հաշտեցնելու համար:



Արտաշէսի լուղարկաւորութիւնը

Անգամ մը ուզեց գարձեալ ապստամբիւ Հը-
սոմայեցիներէն, բաւական յաջողեցաւ, յաղթեց մէկ
երկու անգամ, բայց ի վերջոյ ստիպուեցաւ բարե-
կամ ըլլալ: Անգամ մը երբ Պարթիները և Հռոմա-
յեցիները հաշտեցնելու համար Պարսկաստան կ'եր-
թար, ճամբան հիւանդացաւ և մեռաւ: Փառաւար
թաղում մը կատարեցին: Անոր զաղաղը ոսկիէ էր և
թանկաղին քարերով: Թաղուած տաեն շատեր ինք-
զինքնին սպաննեցին անոր զերեզմանին վրայ:

Արտաշէս 41 տարի թագաւորեց: Անոր որդին
Արտաւազդ Բ. յաջորդեց իրեն, ան հազիւ քանի մը

որ թագաւորեց, որովհետև երբ անզամ մը ձի նըս-
տած որսի կ'երթար, յանկարծ ձիով մէկակղ խոր
վիճի մը մէջ ինկառ:



Արտաւազդ վիճը կը զլորի

ՅՅՅ

ԻՌ . Դ Ա Ս

ՏԻՐԱՆ Ա., ՏԻԳՐԱՆ Գ., ՎԱՂԱՐՇ

ԵՒ ԽՈՍՇՈՎ Ա.

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Արտաւազդի մահէն ետք իրարու յաջոր-
դեցին Տիրան Ա., Տիգրան Գ., Վաղարշ և Խոս-
շով Ա.: Տիրան ձիւնի տակ մնաց և մ'եռաւ.
Տիգրան յոյն իշխանուհիէ մը բռնուեցաւ, բայց
յետոյ աղատեցաւ: Վաղարշ շինեց Վալար-
չաւան և Վալարչապատ քաղաքները, հաս-
տառեց Նաւառադի տօնը: Սպաննուեցաւ հիւ-
սիսային բարբարոս ժողովուրդի մը դէմ
կռուած միջոցին:

Անոր օրով Արտաշեր Սասանեան ապստամ-
բեցաւ և սպաննեց Պարթեներու Արտաւան թա-
գաւորը, հիմը դրաւ Սասանեան իշխանու-
թեան: Խոսրով բազմաթիւ օգնականներով և
զօրքով յարձակեցաւ և փախցուց Արտաշերը:
Անակ Պահլաւունի դաւով սպաննեց Խոսրովը:
Անակի ընտանիքէն աղատուեցաւ միայն Գրի-
գոր, որ կեսարիա տարուեցաւ:

Տիրան Ա. . եի Տիգրան Գ. . — Արտաւազղի
մահեն ետք , անոր յաջորդեց իր եղբայրը Տիրան Ա .
որ ինքզինք խնջոյքներու և սրարդութեան տուալ
և անհոգ եղաւ երկիրը բարեկարգելու :

Անզամ մը ճամբան ձիւնին տակ մնալով մեռու:

Տիրան ալ Արտաւազղի նման որդի չունենաւ
լով անոր յաջորդեց իր եղբայրը Տիգրան Գ. , որ նը-
շանաւոր դործ մը չկրցաւ ընել : Միայն թէ Պարթե-
ներուն հետ բարեկամ ըլլալով , միասին յարձակե-
ցաւ հոսմէական երկիրներուն վրայ , յաղթեց : Բայց
յայն իշխանուհի մը կողմէ խարդախութիւնով բռո-
նուելով , բռնաը նետաւեցաւ : Հոսմայեցիներուն
կայսրը մեծ գօրքով Հայաստան եկու , գրաւեց ու
Տիգրանին ալ ներելով ազատ արձակեց : Տիգրան 42
տարի թագուար եղաւ :

ՎԱՂԱՐԾ ԵԻ ԻՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԵՐԸ . —
Տիգրանին յաջորդեց իր որդին Վաղարշ , որ
իր անունով մէկ երկու քաղաքներ չինեց : Այդ քա-
ղաքներէն մէկն էր Վաղարշաւան , որ կը գտնուէր
եր . . . ի արեւելեան կողմը , Երասիս եւ Մուրց գե-
տեւն իրար միացած տեղը : Այդ քաղաքը հիմակ
դիւղ մըն է , որ կը կոչուի Քօփրիւ ժեօլ : Վաղարշ
բուրովին հիմէն նորոգեց նաեւ ուրիշ զիւղ մը եւ
անունը զրաւ Վաղարշապատ , որ հիմակ ալ կը գրա-
նուի էջմիածնի քովիկը : Իր աթոռը փոխազրեց
այդ քաղաքը , որ բերդերով ամրացուց :

Վաղարշ Հայոց տարեմուաին՝ նաւասարդին ա-
ռաջին օրը ազգային մեծ տօն մը հաստակեց , ամէն
տարի մեծ հանդէսով կը տօնուէր Բաղաւանի մէջ՝
Հայոց Ամանորի տառուածը : Բաղաւան չինուած է
Եփրամի եղերքը , Բագրեւանդ կաւառին մէջ . հիմակ

այս գուշառին անունն է Ալաշկերտ :
Վաղարշի վերջին տարիները Կովկասի հիւսի-
սային ազգերը յարձակեցան Հայաստան : Վաղարշ
գօրք ժողվեց եւ դէմ գնաց անոնց , յաղթեց , բայց
Երկրորդ անգամ կուտած առեն սպաննուեցաւ :

ԽՈՍՔՈՎ ԵԻ ԱՐՏԱՇԻՐ ՍԱՍԱՆԵԱՆ . — Անոր որ-
դին Խոսրով Ա. , անմիջապէս զօրք ժողվեց եւ յար-
ձակեցաւ թշնամիին վրայ , իր հօրը վրէժը լուծելու
համար : Վանաեց զանոնք Հայաստանէն , յաղթեց եւ
առուրք առնելով դարձաւ իր երկիրը :

Անկէ ետքը Խոսրով բարեկամ ըլլալով թէ Հը-
ռոմայեցիներուն եւ թէ Պարթեւներուն , խաղաղու-
թեամբ կառավարեց իր երկիրը :

Այս միջացին Պարսկաստանի մէջ մեծ դէպք մը
պատահեցաւ , Արտաշիր անուն մէկը , որ Պարսկաս-
տանի մէկ մասին իշխանն էր , ապստամբեցաւ Պար-
թեւ թաղաւորին Արտաւանի դէմ : Արտաշիր Սասան
անուն մարզու մը թոռն ըլլալով կը կոչուէր Սա-
սանեան , իր գերդաստանն ալ այդ անունը առաւ :

Պարթեւ թաղաւորները ակարացած էին . ինք-
զինքնին ուրախութեան եւ խնջոյքի տուած էին ,
ժողովուրդը բնաւ չէին հոգար : Իրենց հին հայրե-
րու կրօնքին կարեւորութիւն չէին տար : Այդ
պատճառաւ ժողովուրդը անոնցմէ դժուն էր : Ուստի
երբ Արտաշիր Սասանեան ապստամբեցաւ , ամէնքն
ալ անոր կողմն սկսան բռնել : Արտաւան ուզեց պա-
տերազմիլ եւ Արտաշիրը ջախջախել . բայց չի յաջո-
ղեցաւ եւ սպաննուեցաւ : Այն ժամանակ Արտաշիր
եղաւ Պարսկաստանի թաղաւոր եւ Սասանեան իշ-
խանութեան հիմնադիրը :

Մեծն Խոսրով երբ լսեց Արտաշիրի ապստամ-
բիւր ու իր արխանակից Արտաւանի դէմ կոռւիլը ,
շտապեց անոր օդնութեան հասնելու : Բաւական ա-

ոաջ գնաց , երբ լսեց որ Արտաւան մեռեր է . արբա-
մութեամբ ևտ դարձու ևւ սկսու պատերազմի պատ-
րասուիլ :

Մեծն Խոսրովի հետ միացան Արտաւանի հաւ-
տատրիմ զինուորները , Մարերը , Վրացիները ևւ
ուրիշ ազգեր . Հոռմայեցիներն ալ օդնութեան և-
կան : Խոսրով երկու անդամ յարձակեցաւ Արտա-
շիրի վրայ , որ յաղթուելով ստիպուեցաւ փախչիլ
Հնդկաստան :

Արտաշիր խորամանկութեան զիմեց : Անակ պահ-
լաւունի պարթեւ իշխանը Հայաստան զրկեց որ զա-
ւաղբութեամբ սպաննէ : Անակ ընտանիքով ևւ զօր-
քով եկաւ Խոսրովի մօս , իբր թէ Արտաշիրէն փոխ-
չելով : Խոսրով սիրով ընդունեց զայն :

Օր յը Խոսրով սրսի գացած էր . Անակ խո-
րեւթեամբ թագաւորը հեսացաւ նախարարներէն ,
իբր թէ գաղանի բան մը ըսելու համար , զաշոյնով
մահացաւ կերպով վիրաւորեց զայն ու փախաւ : Նա-
խարարները հասան զաւածանին եաեւէն , բռնցին
զայն ևւ Երասխ գետը նետեցին :

Խոսրով մեռած ատենը հրաման ըրաւ սուրէ ան-
ցընել Անակի սերունդը , ուրկէ միտյն Գրիգոր մա-
նուկը ազատեցաւ իր ստնառւին ձեռքովը ևւ տար-
ուեցաւ կեսարիա :



ԻԱ . ԴԱ Ս

ՄԵԾՆ ՏՐԴԱՏ

Ա. Մ Փ Ո Փ Ո Կ Մ

Արտաշիր գրաւեց Հայաստանը : Խոսրովի
ընտանիքը կոտորեց . ազատեցան միայն Տրդ-
գատ և Խոսրովիդալս : Տրդատ հառմէական
բանակին մէջ մեծցաւ և քաջութիւններ ըրաւ :
Կայսրը զօրք տուաւ իրեն . եկաւ Հայաստան
Պարսիկները վանաեց և եղաւ թագաւոր : Ամուս-
նացաւ Աշխէնի հետ : Գրիգորը չարչարեց ,
Նահատակեց հսկիմեան կոյսերը : Յիմա-
րացաւ , Գրիգորէն բժշկուեցաւ և քրիստոն-
եայ եղաւ : Շինեցին եկեղեցիներ և գպրոց-
ներ . Գրիգոր ճգնեցաւ Մանեայ այրը : Իր
տեղ փոխանորդ կարգեց Արիստակէս որդին :
Տրդատ Հոռմ զնաց , շուտով դարձաւ կռուե-
լու համար Պարսից ու Գեղուեհոնի դէմ : Ապա
ճգնեցաւ : Նախարարները թունաւորեցին զին-
քը :

ՏՐԴԱՏԻ Ա. Ա. ԶԻՆ ՏՈՒԻՆԵՐԸ . — Արտաշիր
երբ լսեց Խոսրովի և Անակի սպաննուիլը , զօրքով
եկաւ Հայաստան : Հայոց նախարարները թէւ կըռ-
ուեցան , բայց յետոյ հնազանդեցան : Արտաշիր տէր
եղաւ Հայաստանի . ան հրամայեց սուրէ անցնել ելու-
Ազգ . պատմ . Միջին Ա.

բովի ընտանիքը։ Արտաւազդ Մանղակունի իշխանը Հոռմ փախցուց Խոսրովի որդին Տրդատ, իսկ Օստ Ամաստնին ալ առաւ թագաւորական զանձերը և հուրովիդուխտ՝ Տրդատի քայրը և ապաստանեցու Անի (այժմ Քեմախ) ամրացին մէջ։ Այս ամրու-




Խուրովիդուխտ

յը կը գանուէր Եփրատի եզերքը, Երզնկայի արեւածական կողմը։

Արտաշիր Հայաստանի տէր դառնալով հրամայեց որ որվզգական այսինքն պարսկական կրօնի կը բակը վառուի ամէն աեղ ու Հայերը պաշտեն զայն։ Աշխատեցաւ երկիրն ալ իր հասկցած կերպով բարեկարգել։

Այդ միջոցին Տրդատ կը մեծնար հոռմէական բանակին մէջ։ Իր ոյժովն ու քաջութիւնովը մեծ անուն հանեց, անզամ մը վայրի ցուլի մը եղջերաները մէկ ձեռքով բռնեց, ոլորեց վիզը և սպաննեց։ Անդամ մըն ալ կտուարչաւի ատեն իր հակառակորդը

կառքէն վար ձգած էր դինքը, ան վագեց և մրցորդին կառքին ետեւի անիւները բռնելով կառքը կեցուց։ Ուրիշ անդամ մըն ալ Գթաց Հոչէ թագաւորին հետ մենամարտելով յաղթեց և Հոռմայեցիներու կայսրին առջեւ տարաւ։ Անոր քաջութիւններուն համար կայսրը մեծ



Օտակ կը առանք Խուրովիդուխտ ու գահձերը

պատիւներ տուաւ, զօրք յանձնեց որ երթայ իր հօռք գահին վրայ նստի։ Կեսարիայի մէջ անոր միացան շատ մը հայ նախարարներ։ Գրիգորն ալ անոր քարառովարը (գրադիր) եղաւ։ Մատն Հայաստան։ Օտակ Ամաստնի Տրդատի յանձնեց արքունի գանձերը և Խոսրովիդուխտը։

Տրդատ յաղթեց պարսիկ զինուորներուն , զա-
նոնք վռնուեց Հայաստանէն և եղաւ թաղաւոր :
Սմբատ Բագրատունի իշխանը զրկեց Ալանաց



Աշխան թագուհի

Թաղաւորին և անոր Աշխան դռւսարը կնութեան ու-
զեց : Փառաւոր հանդէսով կատարուեցաւ . հարսնիքը
և Աշխան եղաւ թագուհի Հայոց :

ՏՐԴԱՏԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ , ՀՅՈՒՖՍԻՄԵԱՆՅ ԵԽ
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ . — Տրդատ իր յաղթու-
թիններուն համար Երկզա (Երզնկա) գնաց , չնորհա-
կալ թլլալու Հայոց աստուածուհի Անահիտին , և հրա-
ման ըրաւ իր քարառակար Գրիգորի որ ծաղկեալը-
սակ մը դնէ աստուածուհիի արձանին ստքը : Գրի-
գոր մերժեց . ուստի Տրդատ չարչարէլ առւաւ զայն :
Բայց երբ իմացաւ թէ Անակի որդին է , ևոր Վի-
րապը նեանել առւաւ : Գրիգոր երկար տարիներ ապ-
րեցաւ հոն , որովհեակ ծերուկ կին մը ամէն օր

հաց կը ձգէր անոր : Շատ ժամանակ վերջը այդ Վի-
րապին վրայ չինուած է վանք մը , որ կոչուած է
Խոր Վիրապի վանք :



Մեծն Տրդատ


Այդ միջացներուն քանի մը կոյսեր հռոմէտա-
կան երկիրներէն փախչելով եկան Հայաստան : Ա-
տոնց մէջ էր Հոփիսիմէ , զոր Գիոկղետիանոս կայս-
րը իրեն կին առնել կ'ուղէր : Տրդատ երբոր իմա-
ցաւ անոնց զալուսար , մարդ զրկեց , փնտոել ար-
ուաւ ու զաւաւ : Անոր գեղեցկութեան հաւնելով ու-
զեց իրեն կին առնել , բայց Հոփիսիմէ մերժեց :
Այն ասեն Տրդատ նահատակել առւաւ զայն և իր
37 ընկերները :

Անոնց մէջ կը գանուէր և նահատակուեցաւ
նաև Ա . Գայեանէ կոյսը :

Տրդատ առոր վրայ հիւանդացաւ և յիմարա-
նալով լեռները կը թափառէր կենդանիներու պէս :
Խոսրավիդուխա երազ աեսաւ թէ միայն Գրիգորը
պիտի կարենայ լժշկել . զացին Գրիգորը ևոր Վի-

քաղէն հանեցին։ Ան բժշկեց թափաւորը և քարոզեց ու ամէնքն ալ քրիստոնեայ դարձան։

Ազա սկսան քանդել մեհեանները և կուռքերը ու անոնց տեղ ամառներ կանգնել։ Ս. Գրիգոր Կեսարիա ղրկուելով եպիսկոպոսավետ ձեռնաղբուեցաւ այն տեղի Ղեւոնդ մետրոպոլիտէն (եպիսկոպոս) և ուրիշ եպիսկոպոսներէ։ Հայաստան դառնալով



Ս. Էջմիածնի եկեղեցին

Իր հետ բերու Ս. Յովհաննէս Մկրտիչի և Աթանազինէսի նշխարները։ Եփրատ գետին մէջ մկրտեց թաղաւորն ու յոյժ բաղմաթիւ Հայեր, որոնց թիւն էր 4 միլիոն հոգի։

Անկէ եաքը հիմնուեցան դպրոցներ, որոնց մէջ կը սորվեցնէին յունարէն և ասորերէն, որովհետ հայերէն զիր չկար։

ՏՐԴԱՑԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ. —
Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր զործը աւարաելէն եաքը, կ'ուզէր առանձնանալ և աղօթել. ուստի կ'երթար քարայրի մը մէջ կը փակուէր. եւ որպէս զի իր ժողովուրդը առանց հովիւի չմնայ, իր երկուորդիները Կեսարիայէն բերել առլով, կրտսերը՝ Արքիստակէսը եպիսկոպոս ձեռնաղբեց և իր տեղը դը-

բաւ։ Ինք ալ քաշուեցաւ Սեպուհ լեռան։ Մանեալ այրը, ուր ձգնելով մեռաւ։ Հովիւները զանելով անոր դիակը կը թաղեն նոյն այրին մէջ։

Իսկ Տրդատ լսելով որ Կոստանդիանոս կայորը քրիստոնեայ եղած է, զնաց Հոռոմ ու բարեկամացաւ։ Անոր բացակայ եղած առենը Պարսիկները և հիւսիսային բարբարոս ազգերը, որոնց առաջնորդն



ՏՐԴԱՑԻ ԳՐԻԳՈՐԻ ԿՐՈՆԱԿԱՐԱԿԱՆ ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

էր Գեղուենոն, յարձակեցան Հայաստան։ Տրդատ շուտավ դարձաւ ու իր թշնամիները սարսափավ փախցուց երկրէն։

Անկէ եաքը Տրդատ տեսնելով որ նախարարները զինքը չեն յարգեր, քրիստոնեայ չեն ուզեր մը՝

հաւ, նեղուեցաւ ու ինքն ալ քաշուեցաւ Մանեայ
այրը: Նախարարները գացին և թունաւորեցին
զայն:



ԻԳ. Դ. Ս

ԽՈՍՐՈՎ Բ. ԵՒ ՏԻՐԱՆ Բ.

Ա. Մ Փ Ա Փ Ո Ւ Մ

Տրդատի յաջորդեց իր որդին Խոսրով Բ.
Կոստիկ, որ շինեց Դուին քաղաքը ու Խոսրովին անտառը:

Խոսրովի օրով հայ Նախարարները սկսան
իրարու հետ կոտիլ, զիրար կոտորելի: Նոյն
իսկ անսնցմէ ումանք սկսան դաւաճանութիւն
ընել: Խոսրովի աջ բազուկը եղաւ քաջ իշխանը՝ Վաչէ Մամիկոնիան: Դուրսի թշնամիներէն հիւսիսային բարբարոս ազգերն ու Պարսիկները արշաւեցին Հայաստան, բայց ետ
մզուեցան սոսկալի կորուստներ տալով:

Խոսրովի յաջորդեց իր որդին Տիրան Բ.,
որ ջանաց բարեկամ ըլլալ թէ՛ Պարսիկներուն
և թէ՛ Հոռոմներուն: Ծնտանեկան թշնամութեամբ Յուսիկն սպաննել տուաւ: Եապուհ Տիրանի աշքերը այրել տուաւ:

ԽՈՍՐՈՎ ԵՒ ԻՐ ՆԿՈՐԾ. Ի. Բ. — Տրդատի
մահն ետքը հայ Նախարարները սկսան իրարու հետ
կոռուիլ, զիրար կոտորել և երկիրը տկարացնել:
Այդ կոթուներուն մէջ իսպառ ջնջուեցան Բզեռունեաց,
Մանաւազեաց և Որբունեաց Նախարարութիւնները:

Հայոց կաթողիկոսը և մէկ քանի Նախարար
ներ աեսնելով այդ դժբախտութիւնը, հոռմէական
կայսեր օդնութեամբը, թաղաւոր կը պսակեն Տըր-
դատի որդին Խոսրով Բ. Բ.: Խոսրով թոյլ մէկն էր-
որսի և խնջոյքներու ետևէն էր: Ազատ զետին եռ-
զերքը (Ազատ զետը կը թափի Երասխ զետին մէջ)
անկել տուաւ անտառ մը, որ իր անունովը կոչուե-
ցաւ Խոսրովակերտ: Ծինեց նոյնպէս Դուին քաղա-
քը և իր աթոռը հոն փոխադրեց:

Խոսրովի թուլութիւնը աեսնելով, Պարսից
թագաւորը կը զրդոէ հիւսիսային լեռնականները.
բայց Վահան Ամառունի իշխանը Օշականի, Երևա-
նի մօս կը յարձակի անոնց վրայ և կը ջարդէ ու
կը փախցնէ զանոնք:

Խոսրովի զրդուած Պարսից թագաւորին հասցուա-
ցած վնասներէն՝ կը մերժէ առուրք տալ: Պարսից
զօրքը կը մանէ Հայաստան: Հայերը կը յաղթեն
շնորհիւ Վաչէ Մամիկոնեան քաջ սպարապետին:

Տիրան Բ., ԱՐԻՍՏՈՆԻԿԵՍ ԵՒ ՎՐԹԱՆԷՍ: —
Խոսրովի մահն ետք անոր աել թաղաւոր կը պը-
սակուի Տիրան Բ., որ Խոսրովի որդին էր:

Տիրան ալ թոյլ ու ապկար մէկն էր: գահը
բարձրանալուն պէս հաշառուեցաւ Պարսից թագաւո-
րին հետ և սկսաւ առուրք տալ թէ՛ Հոռոմներուն և
թէ՛ Պարսիկներուն:

Ա. Գրիգորի որդին Արիստոնիկէս մեռնելէ յե-
տոյ՝ անոր յաջորդեր՝ կաթողիկոս եղեր էր Գրիգո-

բի միւս որդին վրթանէս : Ան ամուսնացած էր և
առնեցած էր երկու որդիներ՝ Յուսիկ և Գրիգորիս :
Գրիգորիս իր մեծ հօրը՝ Գրիգոր Լուսաւորիչի կող-
մէ եղիսկովոս ձեռնադրուած՝ զրկուած էր Աղուաննե-
րու երկիրը քրիստոնէութիւնը քարոզելու համար .
Աղուանները զայն նահատակեցին վատնեան դաշտին
մէջ ձիու մը պոչին կապուած քաշկոտելով : Միւսը՝
Յուսիկ, Վրթանէսի մահէն ետք, անոր յաջորդեց
իրքե կաթողիկոս : Յուսիկ իր հայրերուն պէս նա-
խանձայոյզ ողի մունէր քրիստոնէական կրօնքին
համար . ան շարունակ կը յանդիմանէր թագաւորն-
ու պալատականները իրենց անկարգ կեանքին հա-
մար : Յուսիկ ամուսնացած էր Տիրանի քրոջ հետ-
սակայն յետոյ աշխարհի կեանքէն քաշուած էր և
ինքինքը տուած էր ձգնաւորական կեանքի :

Յուսիկ օր մը կը գտնուէր ծոփաց գաւառը .
Տիրան ալ եկաւ հոն . երբ թագաւորը կ'ուզէր եկե-
ղեցի մանել, Յուսիկ կշամքեց ու յանդիմանեց
զայն . այն ժամանակ Տիրան բարկութեամբ հրամա-
յեց բրածեծ ընել զայն . Յուսիկ ծեծին տակ մեռաւ :

Պարսից թագաւորը առիթի մը կ'սպասէր Հա-
յաստանը զրաւելու , Հայոց թագաւորութիւնը ջնջե-
լու . միայն թէ կը քաշուէր Հոռմներէն : Տեսնե-
լով որ Հոռմայեցիներու կայսրը զբաղած է և բա-
րեկամ չէ Տիրանի , օր մը Հայաստանի սահմանա-
գլուխին վրայ խարելով՝ իրը թէ բարեկամաբար
Տիրանը իր մօս կանչեց , աչքերն այրել տուաւ և
թագաւորութենէն զրկեց : Աչազուրկ Տիրան քաշ-
ուեցաւ Արագած լեռն մօս կուաշ աւանը , որ իր
սեփական կալուսն էր :



ԻԴ. ԴԱՍ

ԱՐՇԱԿ Բ. ԵՒ ՄԵԾՆՆԵՐՍԷՍ

Ա. Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Շապուհ, Պարսից թագաւորը , տեսնելով
որ Հոռմները Հայերուն կողմը կը բոնեն և
մեծ խնդիր պիտի ըլլայ , ստիպուցաւ թա-
գաւոր ճանչնալ Տիրանի որդին Արշակ Բ. ը :

Արշակ բարեկամութիւն խոստացաւ Շա-
պուհի, տալով նաև տարեկան տուրքը : Հո-
ռմներու կայսրը այս լսելով բարեցաւ և
զինուոր զրկեց Արշակի վրայ , որ խոնարհե-
ցաւ և ամուսնացաւ Հոռմներու արքայական
ընտանիքն աղջկան մը , Ալիսպիսիալի հետ :

Արշակի օրով կաթողիկոս եղաւ Յուսիկի
թոռը Մեծն Ներսէս , որ քաջ , խելացի և շի-
նարար հոգեւորական մը եղաւ : Մեծն Ներսէս
իր մեծ հօրը պէս միշտ կը յանդիմանէր Ար-
շակը անոր ցոփ ու հեշտասէր կեանքին հա-
մար : Անիկա սպաննել տուաւ Ողիմպիադա թա-
գուհին . ուրիշ օր մը իր եղրօրորդին Գնիլը
սպաննել տուաւ , զրաւեց անոր կալուածները
և անոր կինը Փառանձեմ իրեն կնութեան ա-
ռաւ : Մեծն Ներսէս անիծեց զայն :

Արշակ իր անունով քաղաք մը շինեց և
կոչեց Արշակուան . այդ քաղաքին մէջ հա-
ւաքել տուաւ բոլոր չարագործները . հայ իշ-
խանները բալորը մէկ յարձակեցան և կործա-
նեցին այդ քաղաքը ; Նապուհ խարդախութիւ-
նով ձերբակալեց Արշակը և Անյուշ բերդը նե-
տել տուաւ . այդ բանտին մէջ Արշակ լսելով
իր կնոջը՝ Փառանձեմի գերի բոնուիլը և սոս-
կալի խոշտանգումներով սպաննուիլը , անձ-
նասպան եղաւ :

ԱՐԾՈՒԿ Բ. , իր ԳՈՐԾԵՐԸ եւ իր ՆԿԱՐԱԳԻ-
ՐԸ . — Պարսից Շապուհ թագաւորը , տեսաւ որ
Հայերը զգուի մնալով Տիրանի կւորացումէն , սկը-
սած են Հոռոմներուն կողմը բռնել , Հայոց սիրաը
շահերու համար՝ Տիրանի տեղ անոր Արշակ որդին
Հայաստանի թագաւոր պատկեց :

Հոռոմներու կայսրը երբ իմացաւ Արշակի թա-
գաւոր ըլլալը և Պարսից հետ բարեկամանալը , զես-
պան զրկեց Արշակին և յորդորեց որ Պարսից զաշ-
նակցութենէն ետ կենայ : Արշակ Հոռոմներու դես-
պանները անպատճեւթեամբ ետ դարձուց . ատոր
վրայ կայսրը բարկացաւ , սպաննեց անոր եղբայրը ,
Տրդատ , որ Տիրանի օրով պատանդ զրկուած էր Կ.
Պոլիս կամ Բիւզանդիոն . Թէսդոս գորապետն ալ Հա-
յաստան զրկեց :

Արշակ վախցաւ և Յուսիկի թոռ Ներսէս կաթո-
ղիկոսը իրրե միջնորդ Պոլիս զրկեց ; Կայսրը զիջաւ
և իր մօս գանուած պատանդները արձակելով , կայ-
սերական տունէն Ողիմափադա անունով օրիորդը
Արշակին կնութեան ուղարկեց :

Պարսից Շապուհ թագաւորը լսելով շատ բար-

կացաւ . ուզեց Արշակը պատժել . բայց Հոռոմներուն
հետ դարձեալ պատերազմի բոնուած ըլլալով Արշա-
կին օդնական զօրք ուզեց . Արշակ վախցաւ և անոր
պահանջքին գոհացում տուաւ : Այն ժամանակ իրեն
թշնամի զարձաւ Հոռոմներու կայսրը , որ Թէսդոս
զօրապետը նորէն Հայաստան զրկեց :


Արշակ կայսեր սիրաը շահելու համար դարձեալ
իրրե ղետպան զրկեց Մեծն Ներսէսը . կայսրը Ար-
շակի նամակն առնելով չկարդաց անգամ և Մեծն
Ներսէսն ալ աքսորեց . Ներսէս յետոյ ազատեցաւ
իր աքսորէն , երբ Բիւզանդիոնի կայսրը մեռնե-
լով ուրիշ մը յաջորդեց :

ԱՐԾՈՒԿ Բ. ԵՒ ԳՆԵԼԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՔ , ՓԱ-
ՌԱՆՁԵՄ . — Պոլիսի մէջ սպաննուած Տրդատը որ-
դի մը ունէր , որուն անունն էր Գնէլ : Երիտասարդ
Գնէլ ազատուելով եկաւ բնակեցաւ կուաշ աւանը ,
կուրացած Տիրանի մօտ : Տիրան երբ իմացաւ իր
տղուն Տրդատի մահը , շատ ցաւեցաւ . ան իր բո-
լոր կալուածները իր թոռան՝ Գնէլի պարզեցից
Գնէլ ամուռնացաւ Փառանձել անուն գեղեցիկ ու
խելացի իշխանուածիի մը հետ :

Ասոր համար շատերը սկսան նախանձիլ Գնէ-
լի : Տիրիր և Վարդան անուն իշխանները նա-
խանձելով գացին Արշակին և քսութիւններ ըրին
Գնէլի վրայ : Էսին . «Գնէլ կը խորհի զքեզ սպաննել
և թագաւոր ըլլալ» . Արշակ հաւատաց և Գնէլի
կալուածները ձեռքէն առաւ : Ապա ուզելով անոր
զքեզիկ կինը յափշտակել խորհեցաւ սպաննել զըժ-
րախս Գնէլը :

Անգամ մը երբ մեծ տօն կը կատարուէր , և
Գնէլ իր կնոջ հետ եկեղեցի կ'երթար , Արշակի հը-
րամանով զինուորներ բռնցին Գնէլը և տարին
սպաննելու , Փառանձել մաղերը վետելով եկեղեցիք

վազեց, Մեծն Ներսէսի ոտքն ինկաւ և խնդրեց որ
աղասէ Գնէլը: Մեծն Ներսէս ժամերգութիւնը կի-
սատ թողուց և գնաց թագաւորին վրանը: Արշակ
սուտ քուն ձեւացուց : Այդ միջոցին դահիճները
լուր բերին թէ Գնէլը սպաննուեցաւ: Մեծն Ներսէս



Մեծն Ներսէս և Փառանձնի
Արշակ վրանի անջն

անիծեց Արշակը և վրանէն հեռացաւ:

Արշակ յետոյ Փառանձեմ իրեն կին տռաւ: Փա-
ռանձեմ չատ փառասէր էր: Ան ուզեց թագաւորին
առաջին կինն ըլլալու համար Ողիմպիտդան սպան-
նել: ուստի Մրջիւնիկ քահանային միջոցաւ թունա-
ւորեց դայն հաղորդութեան ժամանակ:

ԱրծակՍիԱն, Արծակի ՎԱԽՃԱՆԲ : — Ար-
շակ նախարարներուն հետ ալ թշնամացաւ . ան
ուզեց Արշակաւան անունով քաղաք մը կառուցա-
նել Մասիսի սառութը , և որպէսզի շուտավ բազմա-
մարդանայ , հրաման հանեց որ այն տեղ ապաստա-
նող յանցաւորները պատիմէ աղատ պիտի ըլլան:
Քիչ ատենէն Արշակաւան քաղաքը լեցուեցաւ գո-
ղերով , աւազակներով , չարագործներով և այլն:
Նախարարները բարկացան և յարձակեցան կոտորե-
ցին քաղաքին բնակիչները:

Նախարարները դիմեցին նաև Պարսից թագաւ-
որին և խնդրեցին որ Արշակը պատիչ . ան ալ
Ալանողան անուն զօսակետը զօրքով զրկեց Հա-
յաստան: Արշակ աեսնելով որ իրեն չեն օգներ
նախարարները , ուզեց նուէրներով սիրաշահիլ
Ալանողանը , բայց օգուտ չըրաւ . գերի բռնուե-
ցաւ ու տարուեցաւ Պարսկաստան:

Շապուհ պահանջեց նաեւ Փառանձեմը և մեծ
նախարարներուն կիները , որ Պարսից զուռը տա-
նին: Նախարարները հասկցան Շապուհի միտքը .
առին իրենց ընտանիքները և փախան Հոռոմներու-
երկիրը: Փառանձեմն ալ թագաւորական գանձերն
առնելով ամրացաւ Արտագերս բերդը . այս բերդը
կը գանուէր այժմեան Անի քաղաքին աւերակնե-
րուն մօտերը:

Շապուհ բարկանալով Արշակը բանտարկեց Ա-
նուշ կամ Անյուշ բերդին մէջ, բազմաթիւ զօրքով հը-
րամայեց պաշարել Արտագերս ամրոցը: Իերդը զը-
րաւուելով թագուհին գերի տարուեցաւ Պարսկաս-
տան , ուր ցիցի վրայ հանուեցաւ: Արշակ երբ լը-
սեց այս բոլորը՝ անձնասպան եղաւ բանտին մէջ :

ԽԵ. Գ.Ա.Ս

ՄԵՐՈՒԺԱՆ ԵՒ ՊԱՊ

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Շապուհ Պարսից թագաւորը Հայաստան կը զրկէ ուրացող մէկ քանի հայ նախարարներ, որոնց նշանաւորներն էին Մերուժան և Վահան Մամիկոնեանն : Հայ ուխտավահները կը ջանան լուրջ դիմադրութիւն ցուցնել :

Մեծն ներսէս հայրապետը կ'երթայ Բիւղանդիոն օգնութիւն խնդրելու համար Հոռոմներու կայսրէն . ան Հայոց թագաւոր էը ճանչնայ Արշակի Երիտասարդ որդին Պապ և օղնական զինուոր կուտայ անոնց:

Մերուժան լսելով որ Պապ բիւղանդական և հայ զինուորներով կուզայ, վախնաւով կը քաշուի Պարսկաստան: Նոր զօրքերով շուտով կուզայ և կը կուտին Զիրաւ դաշտին մէջ: Մերուժանի բանակը կը ջախջախուի բուլորվին. Մերուժան կը վախչի, բայց Բագրատունի իշխանը կը հասնի և հրաշէկ շամփուրվ կը պասկէ դայն:

Պապ թագաւորը սկիզբները կը յարգէր Մեծն ներսէսը և մտիկ կ'ընէր անոր խրատ-

ները, բայց յետոյ ինքզինքը կուտայ մոլի կեանքի. կը թունաւորէ Ս. Ներսէսը, կ'ըմբոստանայ Հոռոմներու դէմ, բայց կը ձերբակալուի և կը տարուի Հոռոմներու երկիրը. կը փախչի անկէ և քիչ վերջը կը մեռնի :

Պապի կը յաջորդէ Վարազդաս, բայց Պապի պէս կը բռնուի և կ'աքսորուի հեռաւոր կզզի մը :


Մերուժան եի ԶիրԱհի կՌիիիլ . — Արշակ Բ. ի մահէն ետքը Հայաստանի նախարարները ըստ կամ իրարու հետ գժտիլ և խռովութիւններ յարուցանել: Շապուհ միաքը դրաւ Հայոց թագաւորութիւնը կործանել և երկիրը միացնել Պարսկաստանի: Տեսնելով որ Հայոց կաթողիկոսը և նախարարներէն շատերը Հայաստան չեն գտնուիր, իրաղջիկը Մերուժան Արծրունի հայ նախարարին հետ ամուսնացուց և խոստացաւ զայն թագաւոր պսակել Հայոց, եթէ Հայաստանը նուաճէ և պարսից կրօնքին դարձնէ,

Մերուժան հաւանեցաւ և բազմաթիւ զօրքերով դիմեց Հայաստան: Անոր հետ մէկտեղ էր նաև Վահան Մամիկոնեան նախարարը: Մերուժան եկաւ ըստ կամ բոլոր եկեղեցականները բռնել, կալանաւորել և Պարսկաստան դրկել: Այրեց բոլոր իր ձեռքը ինկած յունարէն գիրքերը:

Մեծն ներսէս այդ ժամանակ Պոլիս կը գանուէր: Ան լսելով բոլոր այդ ցաւալի դէպքերը, խնդրեց Հոռոմներու կայսրէն որ պաշտպանէ Հայերը և Պազր թագաւոր պսակէ: Պապը Արշակի որդին էր, Փառանձեմ թագուհիի տղան: Կայսրը հաւանեցաւ և Պապը, Մեծն ներսէսը և փախած նախարարները

Ազգ. Պատմ. Միջին Ա.

բազմաթիւ յոյն զինուորներով Հայտառան դրկեց:
Մերուժան Հայոց և Հոռոմներու միացած ու-
ժէն զարհութեցաւ և Պարսկաստան փախաւ. Շապուհ
շատ զօրք ժողվեց ու դարձեալ Մերուժանը Հայտա-
ռան դրկեց :




Մեծն Ներսէ

Պապի հետ մէկաւել եկող հոռոմ զօրապետին
տնունն էր Տերենտիոս, որ նոր օգնական զօրք ըս-
տանալով Մերուժանի դէմն երաւ. Պատերազմը սէ-
ղի ունեցաւ Զիրաւ դաշտին մէջ, նպատ լեռնա-
յօտ. Լեռնան վրայ ելած էին Պապ և Մեծն Ներ-

մէս, որ բազկատարած կ'ազօթէր Աստուծոյ:
Առիւը սոսկալի եղաւ. բայց վերջապէս պար-
սիկ զինուորները յաղթուեցան ու սկսան փախչիլ:
Մուշեղ Մամիկոնեան պատերազմին մէջ քաջու-
թիւններ գործեց և վիրաւորեց Աղուանից Ուռնայր
թագաւորը :

Մերուժան սկսաւ փախչիլ : Սմբատ Բազրատու-
նի քաջ իշխանը հասաւ Մերուժանին ետեւէն, ո-
րուն ձին վիրաւորուած ըլլալով ետ մնացած էր : Իրո-
նեց զայն : հրաշէկ շամփուրը պատկի ձեւով բոլորեց,
անոր գլխին դրաւ՝ ըսելով :



Մերուժան շամփուրով կը պատկուի

— Ահաւասիկ կը պատկեմ զքեզ, Մերուժան,
որովհետեւ դուն կը փափաքէիր Հայոց թագաւոր ըլ-
լալ և ես իբրև թագադիր տավետ պէտք է հայրա-
կան պաշտօնս կատարեմ :

ՊԱՊ ԵՒ ՎԱՐԱԶԴԴԱՏ . — Դաւաճան Մերսւ-
ժանն այսպէս սպաննուելէն յետոյ , անոր ընկերը
Վահան Մամիկոնեան նոյնպէս սպաննուեցաւ իր հա-
րազատ զաւակէն :

Պապ իր բարերարներուն շնորհակալ ըլլալսւ
համար , պատուեց զանոնք : Բայց չուտով ինքզին-
քը տուաւ գեղիս ու անտուակ կեանքի մը : Ներսէս
կը յորդքրէր զայն , բայց անօդուտ : Պապ ուղելով
աղատուիլ Մեծն ներսէսի յանդիմանութիւններէն ,
թունաւորեց զայն , վերջէն ալ զղալով մեծ սուդ
ըրաւ ու լացաւ : Բոլոր ժողովուրդը սղբաց Մեծն
ներսէսի մահը , որովհետեւ ամէնուն սիրելի եղած
էր ան իր բարի գործերով ու խորհուրդներով :


Պապ Հոռոմներուն դէմ ալ ապերախտ գանուե-
ցաւ : Պոլիսի մէջ խոռվութիւններ ծրագած էին .
ատկէ օգտուելով Պապ Հոռոմներու գօրքերը Հայաս-
տանէն վոնտեց և սկսաւ պատերազմի պատրաստը-
ուիլ : Հոռոմներու զօրավետը նոր զօրք ժողվելով
անմիջապէս յարձակեցաւ և Պապը բռնելով Պոլիս
աարաւ : Հան զլխատուեցաւ : Պապ թագաւորեց
եօթը տարի :

Զափահաս որդի չունէր Պապ , այդ պատճառով
Հոռոմներու կայսրը Հայոց թագաւոր պսակեց Պա-
պի եղբարբերին Վարազդատ , որ մեծ անուն հա-
նած էր Լանգոբարտացիներու դէմ մղուած պատե-
րազմին մէջ :

Վարազդատ Հայաստան գալով Պապի օրինա-
կին հետեւեցաւ , ուղեց Հոռոմներուն տակ շմնալ :
Շապուհ Բ. Պարսից թագաւորին պատգամաւոր
զրկեց և խնդրեց որ իր աղջիկը իրեն կնութեան
տայ և դաշնակցի : Շապուհ մեծ համակրութիւն
ցոյց տուաւ : Սկսան Հայաստանի և Պարսկաստանի
միջեւ բարեկամական յարաբերութիւններ :

Կայսրը իմացաւ այս բանը . հոռոմ գօրապե-
տին լուր զրկեց Վարազդատը բռնել և Պոլիս զրկել,
եթէ կարելի է համոզելով : Վարազդատ յուսալով
որ պիտի կրնայ ինքզինքն արդարացնել , իր կամ-
քով գնաց կայսեր : Բայց թէողոս երեսն անգամ
չնայեցաւ , այլ շղթայել տուաւ և աքսորեց զայն
թուլիս (Խալանտա) կղզին :

Այսպէս վախճան մ'ունեցաւ Վարազդատ քաջ
հայ թագաւորը , որ համբաւաւոր եղած էր իր զար-



Վարազդատ հինգ Լոնգոբարտացիներ կ'սպաննէ
մանալի քաջազործութիւններով : Ան եղած էր ան-
ձնաւայ , ուժեղ , քաջ աղեղնաձիգ . Լոմբարտացինե-
րու դէմ պատերազմած ժամանակ իր վրայ յարձա-
կող հինգ թշնամիները մէկ շունչով սպաննած էր :



ԵԶ. Դ Ա Ս

ԱՐՇԱԿ Գ. , ՎԱՂԱՐՇԱԿ Բ.
ԵՒ ԽՈՍՐՈՎ Գ.

Ա Մ Փ Ո Փ Ո Խ Մ

Թէոդոս Հոռոմներու կայորը , վարագ-
դատին տեղ Հայաստանի թագաւոր հաստա-
տեց Պապի երկու զաւակները՝ Արշակ Գ. և
Վաղարշակ Բ. , որոնք Հայաստանը իրենց
մէջ բաժնեցին: Վաղարշակ նոյն տարին մե-
ռաւ , իր եղբայրը մինակն սկսաւ թագաւո-
րել: Պարսիկները և Բիւզանդացիները Հայա-
տանը բաժնեցին երկու մասի և իւրացուցին-
դանոնք: Բիւզանդիոնի բաժինին վրայ իշխան
եղաւ Արշակ Գ. , իսկ պարսկական բաժինին
վրայ իշխան զրկուեցաւ Խոսրով Գ. Արշակու-
նի : Խոսրով սիրաշահեցաւ հայ նախարար-
ները և երբ Արշակ մեռաւ , Խոսրով տիրեց-
ամբողջ Հայաստանին: Խոսրով Գ. ստիպուած
էր երկու իրարու թշնամի իշխանութիւններու
ծառայել . ասիկա շատ դժուար էր: Շապուհ
կասկածեցաւ Խոսրովի վրայ , ուստի իր որ-
դին Արշակիը զրկեց . ան եկաւ և գերի-
բռնելով տարաւ Պարսկաստան :

Շապուհ բանտ նետեց Խոսրովի և հրա-
մայեց թագաւոր դնել Վաստավակ :

ԱՐՇԱԿ Գ. ԵՒ ՎԱՂԱՐՇԱԿ . — Թէոդոս Մեծն
կայուրը որպէսպի Հայերը չապսամբին՝ վարազզար-
ափ տեղ թագաւորեցուց Պապին երկու որդիները .
Արշակ Գ. և Վաղարշակ Բ. , որոնք Պոլիս պատանդ
Արշակ իր աթոռը հաստատեց Գուփն , իսկ Վա-
րչակ Երիգալ:

Վաղարշակ նոյն տարին մեռաւ . որով Արշակ
Գ. մինակը թագաւորեց բռլոր Հայաստանի վրայ:

Թէոդոս ալ մեռաւ . անոր երկու որդիները
թագաւոր եղան և իրենց մէջ բաժնեցին ամբողջ
թագաւոր եղան և իրենց մէջ բաժնեցին: Պար-
երկիրը: Անոնք թոյլ ու ակար մարդիր էին: Պար-
երկիրը թագաւորին հետ համաձայնեցան և Հայաստա-
նից թագաւորին հետ համաձայնեցան: Արևելեան կողմը
նը երկու մասի բաժնեցին: Արևելեան կողմը
ընդարձակ մաս մը Պարսից ինկաւ . իսկ արևմտական
մասը՝ Հոռոմներուն:

Արշակ Գ. չուզեց հեթանոս թագաւորի տակ
մնալ , անցաւ Հոռոմներու կողմը . իրեն հետ բազ-
մաթիւ նախարարներ միասին : Շապուհ ստիպուե-
ցաւ Հայաստանի իր բաժնին վրայ թագաւոր զնել
Խոսրով Գ. Արշակունի իշխանոր:


ԽՈՍՐՈՎ Գ. Ի ԽՈՀԵՄ ՔԱՂԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ .
— Խոսրով Գ. խելացի մարդ մըն էր: Ան իր կող-
մը շահեցաւ բռլոր հայ նախարարները: Երբար Ար-
շակ մեռաւ՝ Հոռոմներու բաժնի հայ նախարարնե-
րը հպատակեցան Խոսրովի: Կայսրն ալ ընդունեց որ
Խոսրով ըլլայ բռլոր Հայաստանի թագաւորը , մի-
այն թէ իրեն սուրբ տայ:

Շապուհ կասկածեցաւ Խոսրովի վրայ: Երբ ոք
առանց իր հաճութեան Մեծն ներսէսի որդին՝ Ս .
Սահակ Պարքեւը կաթողիկոս կարգեց , աւելի կաս-
կածեցաւ և բարկացաւ:

Խոսրով այն առեն խորհեցաւ բարեկամ ըլլալ

Հոռոմներուն և միայն անոնց տուրք տալ:

Շասլուն երբ իմացաւ այս պարագան, իր Արտաշիր որդին մեծ զօրքով զրկեց Հայաստան : Խոսրով աւասաւ որ Հոռոմները իրենց խոստումը չեն յարգեր, գնաց Արտաշիրի մօտ, որ դատաստան



Կը ի ճիկլցած վախոս միշտուն

ըրտ, գահէն զրկեց և շղթայի զարնել տուաւ, տարաւ Պարսկաստան :

Խոսրով 5 տարի թագաւորեց: Արտաշիր Խոսրովի տեղ թագաւոր կարգեց անոր եղբայրը՝ Վռամշապուհ :



ԻԵ. Դ Ա Ս

ՎՐԱՄՇԱՊՈՒՀ, ՇԱՊՈՒՀ
ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Գ.

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Խոսրովի յաջորդեց անոր եղբայրը Վարուամշապուհ, որ խոհեմ էր և սիրելի ամէնուն: Վռամշապուհի օրով ամէնէն մեծ դէպքը տեղի ունեցաւ Հայոց համար, այն է Գրի գիւրը: Ա. Սահակ և Ա. Մեսրոպ, երկու հայ մեծ լուսաւորիչները Վռամշապուհի հետ աշխատեցան հայ գիրերը գտնել. անոնք բացին լոյսի վառարաններ՝ գպրոցներ, աշակերտներ հասցուցին, Ս. Գիրքը և ուրիշ մատեաններ թարգմանեցին :

Վռամշապուհի մահէն ետք, Խոսրով եղաւ գարձեալ թագաւոր, բայց քիչ ատենի մը համար. ապա յաջորդեց Շապուհ, որ Պարապի Յավկեց Ա. թագաւորի որդին էր :

Շապուհին ետք Հայոց գահը բարձրացաւ Վռամշապուհի որդին Արտաշէս, որուն անունը Պարսից թագաւորը Արտաշէր դրաւ: Հայ նախարարները զրպարտութիւններով պատճառ եղան որ գահազուրկ ըլլայ ան, 430 ին :

ՎԱԱՄՇԱՊՈՒՀ , Ս. ՍԱՀԱԿ , Ս. ՄԵՍՐՈՊ եւ
ՀՅՅՈՒՑ ՈՍԿԵԴԱՐԻ . — Պարսից արքան Խոսրովի
տեղ թագաւոր կարգեց անոր եղբայրը՝ Վ.Ա.Աշ-
պահ , որ խօնեմ , իմաստուն թագաւորը մը եղաւ :
Սիրելի եղաւ թէ՛ Հայերուն , թէ՛ Հոռոմներուն և
թէ՛ Պարսիկներուն :

Անոր օրով Հայոց կեանքը նոր աղի մը առաւ,
երկու նշանաւոր անձերու չնորդիւ . այդ անձերն



Ս. Սահակ Պարբեւ

Էի՞ն Ս. Սահակ և Ս. Մաշբոց : Անոնք աւեմնելով որ
Հայերը զիր ու զրականութիւն չունին ; Հայոց ե-
կեղեցիներուն մէջ անգամ յունարէն և ասորերէն
կը կարդային , որոշեցին հայկական գիրերը զանել :
Վուածապուհ թագաւորն ալ սիրով միացաւ անոնց

հետ և միասին աշխատեցաւ :

Երկար տանջանքներէ և ձամբորդութիւններէ
յետոյ , Ս. Մեսրոպ զտաւ հայերէն գիրերը և անկէ-
ետքը սկսան թարգմանել Ս. Գիրքը և ուրիշ բազ-



Ս. Մեսրոպ Մաշբոց

Ժաթիւ գիրքեր : Բացին զպրոցներ , ուր աշակերտ-
ներուն կը սորմեցնէին հայերէն գիրերն ու գիր-
քեր թարգմանելը : Այդ աշակերտները կոչուած են
Թարգմանիչներ : Անոնց մէջ նշանաւոր եղած են .
Պետնի Երեկ , Յովսէփ , Եղիշիկ Կողբացի , Կորիւն
Միանչելի , Յովհան Եկեղեցացի , Մովսէս Խորենացի :

Մովսէս Խորենացի առաջին անգամ գրեց Հա-
յոց աւանդական պատմութիւնը և շատ նշանաւոր
մէկը եղաւ : Անոր ընկերներն էին Եղիշէ , Գաւիր

ԱՅԵՎՈՐ ՀԱՅՈՒՆ :

Իսկ Դեւոնդ Երէց համբաւաւոր եղաւ Վարդա-
նանց պատերազմի ժամանակ, ինչպէս պիտի տեսնենք
և սորվինք Միջին Բ. Հայոց Պատմութեան մէջ :



Ս. ԴԵՎՈՆԴ ԵՐԷՑ

Անոնց այս շրջանը կոչուեցաւ ՌԱԿԵԴԱՐ :

Այդ բոլոր աշակերտները ուսում սորվելու հա-
մար գացին Պոլիս, Աղեքսանդրիա, Աթէնք և ու-
րիշ քաղաքներ :

Վառմշապուհ խաղաղ կերպով կառավարելով 24
տարի թագաւորելէն ետք մեռաւ : Ս. Սահակ հայ-
քաղեաբին խնդրանքով Խոսրով Գ. ը դարձեալ թա-
գաւորական գահը բարձրացաւ : Բայց հազիւ տա-
րի մը թագաւորելով մեռաւ :

ՎԵՐԶ ՀԱՅ ԱՐԾԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՈՒԹԵԱՆ

ՇԱՊՈՒՀ ԹԱԴԱՒՈՐ ՀԱՅՈՑ , ԱՐՏԱՇԵՍ . —
Պարսից թագաւորն էր այն ժամանակ Յազկերտ Ա.,
որ ուզեց ջնջել Հայոց թագաւորութիւնը և իր որ-
դին նապուհը Հայոց վրայ թագաւոր կարգեց :

Հայերը չսիրեցին ՇԱՊՈՒՀԸ . զայն կ'անարգէին,
« Կրակի որդի » և « Կնամարդի » անունները տա-
լով անոր : Այսպէս չորս տարի մնալէն ետքը , երբ
լսեց թէ հայրը հիւանդացեր է , գնաց Պարսկաս-
տան՝ գահը ժառանդելու :

Շապուհ Պարսկաստանի թագաւոր եղաւ , բայց
շուշով սպաննուեցաւ ու անոր յաջորդեց Վռամ :
Պարսից այս նոր արքան զօրք զրկեց Հայաստան ,
որ ապստամբ նախարարները խոնարհին , բայց տես-
նելով որ անօգուտ է , Վռամշապուհի փօքր որդին
Արտաշէսը թագաւոր պսակեց և անոր անունն ալ
փոխելով Արտաշիր դրաւ :


Բայց երիտասարդ թագաւորը իր անկարգ կեան-
քով ատելի եղաւ նախարարներուն , Սահակ կաթո-
ղիկոսը քանի մը անգամ խրատեց զայն , բայց ա-
նօգուտ : Նախարարները խորհուրդ ըրին որ եր-
թան Պարսից թագաւորին , խնդրեն որ Արատչէսը
հրաժարեցնէ և պարսիկ մարզպան (կուսակալ) մը
դրէ : Ս. Սահակին ալ դիմեցին , բայց ան մերժեց
ըսելով .

— Քա՛ւ լիցի , ես իմ հիւանդ ոչխարը չեմ փո-
խեր առողջ զազանին հետ , որուն առաջութիւնը
մեզի վնասակար է :

Բայց նախարարները իրենց որոշումը գործ-
ծադրեցին . զացին իրենց թագաւորը ամբաստա-
նեցին , իրուն թէ Հոռոմներուն հետ բարեկամացած

ըլլայ : Վուամ Հայոց թագաւորը և կաթողիկոսը իր
մօտ կանչեց և առանց անոր խօսքերը լսելու դա-
հազուրիկ ըրաւ երկուքն ալ . պարսիկ մարզպան մը
զրկեց Հայաստան իբրև կառավարիչ , Սուրենակ ա-
նունով փառաէր քահանան ալ կաթողիկոս դրաւ :

Այսպէս վերջացաւ Հայոտուանի Արշակունիւեց
թաղաւորութիւնը 430 թուականին : Քիչ ետքը մեւ-
ուն նաև Ս. Սահակ և յետոյ Ս. Մեսրոպ Մաշթոց :



F. N



ՀՀ Ազգային գրադարան



NL0412349

ԳԵՐԲԻ ՄԵՍՐՈՊ

Հ.0.303 ՊԱ.ՏՄՈՒԹԻՒՆ , Տարբական Ա.	16	Լիլ ա
" " " Ա. Ա.	16	"
" " Միջին Ա.	22	"
" " " Բ.	25	"
Հ.0.3 ԵԿԵՂԵՑԻՑ ՊԱ.ՏՄՈՒԹԻՒՆ, Համատօս	40	"
Հ.0.30.030.6 ՊԱ.ՏՄ.Վ.6 0.7ԿԱ.ԲՀ.ԶԱ.ԳՐՈՒԹԻՒՆ	15	"

ՄԱՆՅԱՑ

ԿՐԵԱԿ ԳԻՐՔ Ա. Հին Աւյսի	20	"
" Ա. Նոր Աւյսի	25	"

5 Լեզու կ'արձի մէկ թէ, ճամփ



ԿԵԴՐՈՒՆԱՏԵՂԻ

ԳՐԱՏՈՒՆ ՄԵՍՐՈՊ

Բաւլովո, Սոֆիա

ՊՈԽՎԱՐԻՒԱ.

LIBRAIRIE „MESROB“

Pavlovo, Sofia

Bulgarie